

ԱՐՁԱԳԱՅԻՆ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՒԱԹԱԹԵՐԹ

ԳՈՒՐՍ Է ԳՍԱԽՍ ԿԻՐՈՒԿԷ ՕՐԵՐԸ

Տարեկան բաժանորդագրինն է հիշ լուրջի: Բաժանորդագրութիւնն ընդունվում է «ԱՐՁԱԳԱՅԻՆ» խմբագրատանը և Կենտրոնական Գրավաճառանոցում: Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ. Редакция „Арцаганкъ“.

Սուսնձին համարները 10 կ.

Յայտարարութիւնների բաւին 2 կ.

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Հայուհեաց Ընկերութեան ընդհանուր ժողովը: Պ. Բաշինջաղեանի պատկերահանդէսը: Գերասանների մասին: Փաստեր:—ՆԱՄԱԿ Կ. ՊՕԼՍԻՑ:—ՄԱՍՆԱԽՍՈՍՈՒԹԻՒՆ: «Գաղանիք Ղարաբաղի»:—ՖԷԼԻԷՏՕՆ: Նիկոմիդիոյ գաւառի Հայ ազգաբնակչութիւնը:—ԸՆԳԻՒՄՍՍՍՍՈՍՈՒԹԻՒՆ: Նամակ Մոսկուայից:—ՋԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ:—ՅԱՅՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Կիւրակէ, Հոկտեմբերի 16-ին, Ս. Նշան եկեղեցւոյ ուսումնարանի դահլիճում, ս. պատարագից յետոյ կայացաւ Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան ընդհանուր ժողովը: Այս անգամ անդամների մեծ բազմութիւն էր հաւաքուել:

Ընդհանուր ժողովին նախագահում էր իշխանուհի կոյս Հռիփսիմէ Աբամելիքեանը:

Ընկերութեան քարտուղար պ. Ա. Քիշմիշեանը կարգաց Հայուհեաց ընկերութեան վարչութիւնից կազմուած վեց ամսուայ նախահաշիւը, այն է Սեպտեմբերից մինչև մարտ ամիսը, որ բովանդակում է իւր մէջ հետևեալ թուանշանները. Ընկերութեան մշտական անդամներից 300 ռ., տարեկան անդամներից 900, նուագահանդէսներից 1800 ռ., միանուագ 100 ռ., և տոկոսներ 400 ռ., ամբողջ գումարն է 3,500 ռուբլի: Կանոնադրութեան հիման վերայ ընկերութիւնը իւր միջոցների համեմատ պարտաւոր է օգնել այլ և այլ հայ օրիորդաց ուսումնարաններին, որոնց համար Ընկերութիւնը յատկացրել է 300 ռ. գումար:

Նախահաշիւը կարգալուց յետոյ Տ. Լիզիա Թամամշեանը, միքանի պարզաբանութիւններ խնդրելուց յետոյ, կամեցաւ իմանալ, թէ որքան է ծախսուել ուսումնարանի շէնքի վերայ: Բայց պ. քարտուղարը պատասխա-

նեց, որ վարչութիւնը դեռ ևս բոլոր հաշիւները կարգի բերած չէ և որ Մարտ ամսին մի ընդհանուր հաշիւ կը ներկայացուի ընդհանուր ժողովին:

Վարչութեան կողմից Տ. Կատարին է Եւանգուլեանը հետևեալ առաջարկութիւնն արաւ՝ մեր ընկերութիւնը, յարգելի տիկնայք, բարեգործական անունը կրելով, կարօտեալներից շատերը ամենայն իրաւամբ դիմում են մեր վարչութեան՝ օժանդակութիւն խնդրելով: Այդ հանգամանքը աչքի առաջ ունենալով և կամենալով հասարակութեան համակրութիւնը աւելի ևս դրաւել դէպի մեր ընկերութիւնը, վարչութիւնը որոշեց իրավունք խնդրել ձեզանից՝ 200 ռ. ծախսելու այդ նպատակի համար: Այժմ ընդունել, թէ մերթեւ մեր առաջարկութիւնը՝ կախուած է ձեզանից, վերջացրեց խօսքը յարգելի տիկինը, բայց վարչութիւնս համոզուած է, որ խնդիրը ամենայն կողմից զննելուց յետոյ, ընդհանուր ժողովը իւր հաճութիւնը կ'տայ՝ մի ծախս անելու, որ ապագայում ընկերութեան ոչ միայն նիւթական, այլ և բարոյական շահերին կ'ծառայէ:

Գորան պատասխանեց Տ. Մարիամ Խատիսեանը, թէ 200 ռուբլին այնքան չնչին մի գումար է, որ օգնութիւնը օգնութեան նման չի լինելու, որ աւելի լաւ է այդ գումարն էլ ծախսել ուսումնարանի վերայ, որտեղ ուսանում են չքաւոր դասակարգի աղջկերք, որոնք ապագայում իրանց ձեռքի աշխատանքով ապրուստ կը հայթաթեն: Տ. Լիզիա Թամամշեան հարց բարձրացրեց, թէ նախ և առաջ պիտի աշխատել այդ յօդուածը մտցնել կանոնադրութեան մէջ: Տ. Եւանգուլեան պատասխանեց, թէ, եթէ ընդհանուր ժողովը ընդունի վարչութեան առաջարկութիւնը, այդ մի գանցառութիւն չի լինիլ կանոնադրութեան դէմ, մանաւանդ որ ընկերութիւնը կրում է բարեգործական անուն: Բայց երբ ընկերութեան միջոցները կաւելանան և այդպիսով վարչութիւնը միջոց կունենայ աւելի մեծ գումարներ ծախսելու մասնաւոր բարերարութեան համար,

այն ժամանակ մենք թույլտուութիւն կ'իսնդրենք՝ այդ յօդուածները կանոնադրութեան մէջ մտցնելու:

Տ. Ս օ ֆ ի ա յ Մ ե լ ի ք ե ա ն և ս յ ա լ տ ն ե ց, որ միանգամայն համակարծիքի է տ. Թամամշեանի յալտնած մտքերին, այսինքն առ ժամանակ չը դուրս գալ կանոնադրութեան շրջանակից:

Այդ հարցը վճռելուց յետոյ, տ. Մ ա ր ի տ մ Մ ե լ ի ք ե ա ն, Դ ա ր ի ա Յ օ վ հ ա ն ն ի ս ե ա ն և ա յլ տ ի կ ն ա յ ք և օր ի որ ղ ն ք ի խ օ ս ե չ ի ն տ. Խատիսեանի կարծիքներին հակառակ, առաջ բերելով, թէ մի փոքր գումարով էլ կարելի է օգնութիւն հասցնել չբաւորներին և այդպիսով աւելի գրաւել հասարակութեան համակրութիւնը գէպի կանանց Ընկերութիւնը:

Երկար վիճաբանութիւններից յետոյ, որոշեցին միաձայն՝ տ. Ս ր ք ու Հ ի Ե ր ի ց ե ա ն ի և տ. Կ ա տ ա ր ի ն է Տ է ր Վ կ ր տ չ ե ա ն ի առաջարկութեամբ՝ իրաւունք տալ Վարչութեան՝ 500 ր. ծախսել թէ ալ ուսումնարաններին օգնելու և թէ մասնաւոր բարերարութիւն անելու:

Մի ուրախալի երևույթ, որ նկատեցինք այն օրը՝ այդ կանանց ու օրիորդների ոգևորուած և գոհ գէմքերն էին, նրանց անսահման համակրութիւնը գէպի Ընկերութիւնը և նրանց բաւականութեան խորին զգացմունքը՝ տեսնելով այդպիսի մի գեղեցիկ շէնք կառուցած իրենց ընծայած կոպէկների շնորհիւ: Արդեօք նման չեն գրբանք այն դայեակներին, որոնք խնդում, գմայլվում են, տեսնելով իրանց շատ բան խոստացող սաներին:

* * *

Պ. Գէորգ Բաշինջաղեանի պատկերահանագէտը, որ ահա երկու շաբաթ է շարունակվում է, այսօր, երեկոյեան 4 ժամին կ'փակուի: Ժամանակը մեզ չ'ներեց հայ տաղանդի ստեղծագործութեան մասին մեր կազմած ընդհանուր գաղափարը արտայայտել «Արձագանքի» էջերում: Սակայն խօստանում ենք մի ուրիշ առիթով կատարել մեր այդ պարտականութիւնը: Պարտականութիւն ենք ատում, որովհետև անկարելի է զանցառութեան տալ մի երիտասարդ վրձին, որի արտագրութիւնները արդէն գրաւել են ընդհանուր ուշադրութիւնը և համակրութիւնը:

* * *

Մեզ գրում են Կ. Պօլսից.
«Թիֆլիսի լրագիրներէն կ'երևի, թէ այդ տեղ կը սպասեն այստեղէն դերասաններու և դերասանուհիներու: Դերասաններէն կարևորագոյնները չը պիտի գան, կարծելով, թէ անհաճոյ գործ մ'ըրած կը լինեն թուրք կառավարութեան դէմ: Ծիծաղելի պարագայ, պատրիարքներու քաղաքականութիւնը դերասաններու վրայ ծաղկած կ'երևի. . . Իսկ դերասանուհիներէն՝ Սիրանոյշ և այլք տակաւին պայմաններու վրայ համաձայն չեն, մինչև այս վայրկեանս, կարելի է կէս ժամ յետոյ որոշուի այդ խնդիրը»:

* * *

Փ Ա Ս Տ Ե Ր

1886 ամի, փետրվարի 19 ին Թիֆլիսի Դատատանական Պալատը քննեց Հայոց Վրաստանի և Իմերէթի կոնսիստորիայի գործը՝ իշխան Իվան Բագրատիօն-Մուխրանսկու հետ ունեցած վէճը կզդու մասին: Գործի ՀԱՆԳՈՒՄԱՆՔԸ—Հայոց կոնսիստորիայի հաւատարմատար՝ երջուեալ փոստարան Սենեքերիմ Արծրունին, 1882 ամի, գեկտեմբերի 14. ին դատ բացեց իշխան Իվան Մուխրանսկու դէմ այն կզդու մասին, որ գանվում է Վանաց Մաչր եկեղեցու հանդէպ, 6000 քառակուսի սաժէն տարածութեամբ, որի վերայ եղել է եկեղեցապատկան պարտէզ և որը զանազան անձանց կապալով տուած է եղել: Այդ կզդին իշխան Մուխրանսկին 1877 թուականին խից և մրացրեց Մաղաթեան կզդու հետ, ցամաքեցնելով Կուր գետի այն վտակը, որ բաժանում էր վիճելի կզդին Մաղաթեան կզդուց: Կոնսիստորիայի հաւատարմատար Արծրունին՝ գնահատելով այդ դատը քառասուն հարաւուր բարձր, խնդրեց դատարանից. 1) ճանաչել Թիֆլիզի Հայոց Վանաց Մաչր եկեղեցու սեպհականութեան իրաւունքը վիճելի կզդու վերայ՝ 6000 քառ. սաժ. տարածութեամբ, որ գանվում է Միքայէլեան կամրջից գէպի հարաւ, չիշեալ մաչր եկեղեցու հանդէպ, հետեւալ սահմանների մէջ. Հետեւից № № 19 և 20 հողաբաժինները և Մաղաթեան կզդին, 1874 թուականի մակարդակի (պլանի) համաձայն Արեւելքից Կուր գետը, Արեւմտքից Կուր գետը և Հարաւից Պօպուլի ջրաղացը և Կուր գետի շարունակութիւնը. 2) պարտասրացնել Մուխրանսկու բանալ այն ցամաքեցրած վտակը, որով վիճելի կզդին բաժանվում էր Մաղաթեան կզդու միւս մասերից. 3) իրաւունք տալ կոնսիստորիային՝ պահանջել Մուխրանսկուց այն վնասները, որ նա հասցրուց եկեղեցուն, խլելով այդ կզդին, որի արդիւնքներեց զրկուել է եկեղեցին: Ի հաստատութիւն այդ դատի՝ կոնսիստորիայի հաւատարմատար Արծրունին ներկայացրեց մի քանի դաշնագրեր, որոնցով եկեղեցին տուել է կապալով 1868 թուականից սկսած այն կզդին, որ գտնվում է Մաչր եկեղեցու գետեզրեայ քարեայ պարսպի և Առաջնորդարանի հանդէպ, 104 ուրբուց մինչև 250 ու. տարեկան վարձով: Այդ դաշնագրերի մէջ կզդու տարածութիւնը չէ որոշած: Ներկայացրեց նոյնպէս Պալատի վճիռը, 1873 թ. հոկտեմբերի 3-ին կալացած, որով վճռւած էր պահանջել կապալառուից այդ կզդու համար կապալադրամը: 1863 թուականին կալմած տեղական արձանագրութիւնից երևում է, որ այդ կզդու վերայ բացի մի անակի աւերակներից ուրիշ ոչինչ չ'կար: Հաւատարմատար Արծրունին ներկայացրեց նոյնպէս մակարդակներ (պլաններ), որոնք ցոյց են տալիս կզդու դրութիւնը, այն է՝ ա) 1871 թ. մակարդակի պատճէնը՝ ճանապարհաշէն չանձնաժողովի (строительно—дорожный комитетъ) աւրած փոփոխութիւններով ափերը ամրացնելու և հողաբաժինները մակարդակի վերայ անցկացնելու վերաբերութեամբ և բ) պատճէն այն մակարդակի, որը վերջնականապէս զըննուած է 21 և 22-ին գեկտեմբերի 1874 ամի, հիմն առնելով ափերը ամրացնելու այն գէծը, որը հաստատել է Կովկասու փոխարքայն: Այս մակարդակի վերայ ցոյց է տուած՝ թէ կզդիների բաժանումն հողաբաժինների և թաղերի և թէ ում, ինչ հողաբաժին է տուած 1852 թուականին՝ նախկին փոխարքայ Վորոնցովի կողմից: Վերջապէս կոնսիստորիայի հաւատարմատարը, ի հաստատութիւն եկեղեցուց տիրապետութեան, խնդրեց հարցնել վիճաներին:

Մուխրանսկու հաւատարմատարը կոնսիստորիայի այս

գատն դէմ պատասխանեց, որ Մուխրանսկին չէ խլած եկեղեցական կղզին կոնստիտուցիոն Հաւատարմատարն խնդրոյն և կապալագրին (ըստնադրին) մէջ որոշած սահմաններով, որով նորա (Մուխրանսկու) տիրապետութիւնը վերջանում է ինչպէս և ինքն Արծրունին յայտնում է, № № 19 և 20 Հողաբաժիններով, որոնք կազմում են իւր պահանջած Հողի Հիւսիսային սահմանը: Մուխրանսկու պահանջած № № 19, 20 և 10 Հողաբաժինները վերջանում են Վոզոփօզին փողոցի Հանդէպ և շեն անցկենում եկեղեցու գաւթից այն կողմը, իսկ ինչպէս կոնստիտուցիոն Հաւատարմատարը ցոյց է տալիս իւր խնդրոյն մէջ՝ կապալով տալիս էր եկեղեցին այն կղզին, որ գտնվում է Վանաց Մայր եկեղեցու գաւթի դէմ: Իշխան Մուխրանսկին իւր Հողը տիրում է օրինաւոր Հաստատած թղթերով (կուպչիաներով) և Վոզոփօզից 1872 թուականին ցոյց տուած բաժանմունքներով: Սորա Համար Մուխրանսկու Հաւատարմատարը խնդրեց, որ երբ կղզու տեղը տեսնել ու զննել պահանջուի, որոշել նոյնպէս Մուխրանսկու պատահանած 10, 19 և 20 Հողաբաժիններն տեղն ևս, որոշելով ոսոս միւս կողմի սահմանը, իսկ թէ այդ Հողերը տիրապետել է միշտ Մուխրանսկին՝ Հարցնել այդ մասին վկաններին: Թիֆլիզի նահանգական դատարանը տնօրինեց տեսնել տեղը և դորա մակարդակը շինել և Հարցնել երկու կողմանց վկաններին: Վիճելի տեղը մակարդակ անցկացնելիս՝ դատարանը չորոշեց № № 10, 19 և 20 Հողաբաժինները, որոնց մասին խնդրել էր Մուխրանսկու Հաւատարմատարը, իսկ կոնստիտուցիոն Հաւատարմատարը ցոյց տուեց Հիւսիսային սահմանը ոչ թէ Վանաց Մայր եկեղեցու գաւթի Հանդէպ, այլ շատ հեռու՝ Վոզօփօզին փողոցից միւս կողմը՝ Բուչդիկի տան մօտ: Երեւեցաւ, որ վիճելի գետինը ընդամենը 2400 սաժ. տարածութիւն ունի: Եկեղեցու վկանները ցոյց տուին չօգուտ եկեղեցու, այն է՝ որ կղզին գտնվում էր եկեղեցու տիրապետութեան ներքոյ, այնտեղ եղել են պարտէզ և ագարակ, որոնց եկեղեցին կապալով է տուել, իսկ Մուխրանսկու վկանները ցոյց տուին, որ վիճելի գետինը միշտ տիրապետել է Մուխրանսկին և որ այդտեղ ոչ պարտէզ և ոչ ագարակ են եղել: Նահանգական դատարանը, նախագասելով եկեղեցու վկաններն ցուցմունքը՝ վիճելի գետինը վճռեց չօգուտ եկեղեցու, տալով իրաւունք պահանջել և արդիւնք 1877 ամի փետրվարի 25-ից սկսած, բաց մերժեց եկեղեցուն, նախկին վտակը վերականգնելու, որովհետեւ Հաւատարմատարը չ'ապացուցեց, որ դորա ջուրը ցամաքեցրել է Մուխրանսկին:

Նահանգական դատարանի այս վճռի՝ դէմ բողոքեց (ապելացիայով) Մուխրանսկու Հաւատարմատարը, կրկնելով իւր առաջուայ տուած բացատրութիւնները և աւելացնելով, որ կոնստիտուցիոն Հաւատարմատարը սխալ է ցոյց տալի վիճելի կղզու սահմանները, որովհետեւ Հիւսիսային սահմանը նա տանում է բարձրութեան վերայ, ուր ոչինչ վտակ չէր կարող լինել, վասնորոյ խնդրում է. 1) որոշել երկրաչափի միջնորդութեամբ մակարդակները վերայ և տեղն ու տեղը՝ թէ արդեօք միտող է գտնվում վիճելի կղզին, միտող է նորա Հիւսիսային սահմանը և միտող է մակարդակի վերայ № № 10 և 20 Հողաբաժինների Հարաւային սահմանը. 2) Համաձայն 403 և 409 չօք. քաղ. օրինակատարութեան կանոնագր. վերահարցնել բոլոր վկաններին, իրարու երես կանգնեցնելով՝ ի նկատի առնելով նոցա հակասական ցուցմունքները. 3) վիճելի կղզին տեսնել տեղն ու տեղը մասնակցութեամբ երկրաչափի, շինել տալ այդ կղզու մակարդակը, որոշելով սահմանները այնպէս, ինչպէս ցոյց տուած են կոն-

ստիտուցիոն Հաւատարմատարի խնդրոյն մէջ, և չափել բոլոր պահանջելի կղզու տարածութիւնը և 4) կանչել ու Հարցնել իբրև վկայ իշխան Գաւթ Բարաթովին ի Հաստատութիւն այն Հանգամանքի, որ 1871 և 1874 թ. մակարդակի վերայ ցոյց տուած № 10 Հողաբաժինը Մուխրանսկին գնել է նորանից և որ նորա Հօր ժամանակից այդ կտոր Հողը միշտ գտնուել է Մուխրանսկու տիրապետութեան և տնօրինութեան ներքոյ: Եկեղեցու Հաւատարմատարը (երգուեալ փաստաբան Յակոբ Տէր-Յովհաննիսեան *) նոյնպէս բողոքեց ապելացիայով վճռի այն մասին վերաբերութեամբ, որով դատարանը մերժել էր կոնստիտուցիոն ցամաքեցրած վտակը բանալու մէջ. ի Հաստատութիւն այն Հանգամանքին, որ վիճելի կղզին իւր սահմանն ունէր այդ վտակը և այդ ցամաքացրեց Մուխրանսկին, խնդրեց Հարցնել վկաններին:

Դատաստանական Պալատը Հարկաւոր դատեց նորից տեսնել վիճելի կղզին և անցկացնել այդ 1852, 1871 և 1874 թ. մակարդակների վերայ: Այս յանձնարարութիւնը կատարեցին երկրաչափները Պալատի անդամի ներկայութեամբ և երևեցաւ, որ 1874 թուականի մակարդակի վերայ նշանակած № № 10, 19 և 20 Հողաբաժինները մտնում են Հենց այն Հողի սահմանները, որը վիճում է եկեղեցին: Պալատի Ատենին ներկայ եղան երկու կողմանց Հաւատարմատարները, որոնցից երդուեալ Հաւատարմատար Տէր Յովհաննիսեանը պաշտպանում էր իւր բողոքը, աւելացնելով, թէ վկանների ցուցմունքով Հաստատվում է, որ իշխան Մուխրանսկին խլել է ամբողջ կղզին: Երկու կողմանց վկաններն ցուցմունքների մէջ կայ տարբերութիւն, Մուխրանսկու վկանները ասում են, թէ վիճելի կղզու վերայ ոչ պարտէզ է եղել և ոչ ագարակ, որ բոլորովին ուղիղ չէ, առհասարակ դոքա իրանց ցուցմունքը արել են մի տեսակ բարոյական ճնշման տակ և այդ շատ հասկանալի է, որովհետեւ Մուխրանսկու վկանները բոլորն էլ նորա մարդիկն են և ծառայում են նորա մօտ. վասնորոյ նոցա ասածներին ամենեկին Հաւատ չէ կարելի ընծայել: Նա, Տէր Յովհաննիսեանը, գտնում է անկարելի և աւելորդ Հարցնել իբրև վկայ Բարաթովին կալուածքը ծախելու մասին, որովհետեւ օրէնքով այդպիսի Հանգամանք ա-

*) Մեզ քաջ յայտնի է, որ երդուեալ Հաւատարմատար Պ. Յուկոբ Տէր Յովհաննիսեանը՝ երբ նորան հրաւիրեց կոնստիտուցիոն եկեղեցական գործերը պաշտպանելու, Հենց սկզբից հրաժարուել է ընդունելու այս գործի պաշտպանութիւնը, ի նկատի ունենալով գործի դժուարութիւնը: Կոնստիտուցիոն աչքի առաջ ունենալով այս Հանգամանքը՝ գիմում է երդուեալ Հաւատարմատար Պ. Ստեփանովին, որը՝ ուսումնասիրելով գործը, բաց է բաց յայտնում է, որ անհարկն է շահել գործը պալատում, որովհետեւ կոնստիտուցիոն նախկին Հաւատարմատար պ. Արծրունին ինքն է ներկայացրել այնպիսի ապացուցութիւններ, ինչպէս օրինակի համար մակարդակները (պլանները), որոնք ուղղակի հակառակն են Հաստատել, այսինքն Մուխրանսկու օգտին և նորա իրաւունքն են ծառայել, վասն որոյ և հրաժարուել է այդ գործը պաշտպանելուց: Այն ժամանակ պ. Տէր Յովհաննիսեանը, իբրև մշտական Հաւատարմատար կոնստիտուցիոն, ստիպուած է եղել Պալատումը պաշտպանել այդ գործը:

Այն ևս յայտնի է, որ պ. Տէր Յովհաննիսեանը երբ հրաժարուել է այս գործը պաշտպանելուց, կոնստիտուցիոն առաջարկել է իւր կողմից վարձաբերութիւն այն փաստաբանի համար, որը կը ընարէ կոնստիտուցիոն և որը կը կրնաւի այդ գործը, և պարտաւորուել է ամբողջպէս ներկայացնելու այն գումարը, որը կը պահանջ է գործը պաշտպանելու յանձն առնող փաստաբանը:

պացուցանելու համար հարկաւոր է հաստատ թղթեր ներկայացնել (կուպչիա և այլն): Իսկ է հաստատութիւն այն հանգամանքի, որ Մուխրանսկին տատիճանաբար խել է կղզին և եկեղեցական կղզու մօտ պատ է ամրացրել, Տէր Յովհաննիսեանը ներկայացրեց Հայոց Վիճակաչին Կոնսիստորիայի թուղթը 23 չունվարի 1881 ամի № 224: Սորա դէմ Պլիւշէվսկին պատասխանեց, որ այսանդ վէճը ոչ թէ 6000 քառ. սաժ. մասին է, որ իբր Մուխրանսկին խել է, այլ հեւտային սահմանի դրութիւնն է, որ Նահանգական դատարանը չը սրտէց: Վիաներից Վանքի երեցփոխանը (Պատկանեանը) ցոյց տուեց, որ Մայր եկեղեցին օգուտ է քաղել կղզուց եզրական իրաւունքով, հետեւաբար նա կարող էր օգուտ քաղել կղզու այն մասից, որ գտնվում է Վանաց մայր եկեղեցու գաւթի հանդէպ և ոչ թէ Վօղօվսկի փողոցի միւս կողմը: Թղթերից երկուսն է, որ Վանաց մայր եկեղեցին տիրապատել է մի կղզի, որ գտնվում է Առաջնորդարանի հանդէպ: Պէտք է կարծել, որ դա մի փոքր կղզի է եղել, Վանաց մայր եկեղեցու մօտ, որի մասին կայ և խոտովանել է 3-րդ բաժանման հաշտարար դատարարին տուած չաչտարարութեան մէջ կոնսիստորիայի հաստատմատարը (Սիմէօնովը): Կղզու մօտ պատ է շինել ոչ թէ Մուխրանսկին, այլ Պօպկովը իւր ջրաղացի համար, իսկ Մուխրանսկին ամրացրել է Մաղաթեան կղզու ափերը համաձայն փոխարքայից հաստատած մակարդակին: Ի հաստատութիւն Մուխրանսկու սեպհականութեան իրաւանց՝ Պլիւշէվսկին ներկայացրեց հետեւալ թղթերը. 1) Թիֆլիզի Նօտարիական Գիւտնատանից հանած հաստատագիրը № 35, 1878 թ. 2) Նոյն տեսակ 1874 թ. № 75, 3) Կովկասու փոխարքայից 28 Ապրիլի 1852 ամի Թիֆլիզի Նահանգապետին տուած առաջադրութեան № 1683, վաւերացրած պատճէնը, 4) միւս առաջադրութեան № 2035 վաւերացրած պատճէնը և 5) Վաւերացրած պատճէն այն չաչտարարութեան, որ մատուցել է 27 Օգոստոսի 1880 ամի հաշտարար դատարարը, կոնսիստորիայի հաստատմատար Սիմէօնովը: Այնուհետև Պլիւշէվսկին չաչտանեց, որ վիաների ցուցմունքին այն ժամանակ կարելի է հաւատ ընծայել, երբ համաձայն են անվիճելի գրաւոր ապացոյցներին, իսկ Մուխրանսկու վիաները երբէք չեն բացասել վիճելի կղզու վերայ եղած պարտիզի գոյութիւնը, այլ ցոյց են տալիս, որ նա եղել է աւելի ցած Վօղօվսկի փողոցից: Նորա կարծիքով նշանակութիւն ունի միայն 1874 թ. մակարդակը, որը ներկայացրել է ինքն Կոնսիստորիային և խնդրում է, որ պարզուի Մուխրանսկուն պատկանեալ հողաբաժինների հարաւաչին սահմանը: Վանաց մայր եկեղեցին Մուխրանսկուց պահանջում է 6000 քառ. սաժ., այն ինչ այժմ վէճը միայն հիւտիսային սահմանի վերայ է և վերաբերում է միայն 2000 քառ. սաժ., այնպէս որ հակառակորդը արդէն իւր սկզբնական պահանջից հեռացել է: Մուխրանսկին Վանաց մայր եկեղեցուց ոչինչ չէ խել և վիճելի հողը երբէք նորա տիրապետութիւնից չէ դուրս եկել, Հակառակ կողմը ոչինչ գրաւոր ապացուցութիւններ է հաստատութիւն իւր դատի չէ ներկայացրել, վասն որոյ Պլիւշէվսկին խնդրեց մերժել կոնսիստորիային և պահանջել նորանից դատարանական ծախքերը: Սորա դէմ պատասխանեց Տէր Յովհաննիսեանը, թէ ամբողջ կղզին խել է Մուխրանսկին, թէ №№ 19 և 20 հողաբաժինները չեն որոշուած 1874 թ. մակարդակի վերայ, այլ որոշված են 1871 թուականի մակարդակի վերայ, վասն որոյ և հարկաւոր է պահանջել 1874 թ. իսկական մակարդակը և համեմատել նորան 1871 թ. մակարդակի հետ: Մուխ

րանսկու առաջ բերած վիաների ցուցմունքը միանգամայն հակասում են իրարու և սխալ են, օրինակ՝ վիաները ցոյց են տալիս, որ Մուխրանսկին արդէն 20 տարի է տիրապետում կղզին, այն ինչ նա այդ հողերը գնել է Բարաթովից և Էրիսթովից միայն 1876 թուականին: Այս մասին Պլիւշէվսկին չաչտանեց, որ եթէ մի որ և է վէճ չարուցանուի 10, 19 և 20-րդ հողաբաժինների մասին, այդ տեսակ վէճը կը վերաբերել Մուխրանսկուն Բարաթովի հետ և ոչ թէ Վանաց Մայր եկեղեցու հետ, որը այս կտորների վերայ ոչինչ իրաւունք չունի: Այս հողերը ընծայել է, ինչպէս երևում է ներկայացրած թղթերից, կառավարութիւնը Մուխրանսկուն և ոչ մի հնարք չը կայ նորա տիրապետութիւնից դուրս հանել դոցա: Այնուհետև պրօկուրորի օգնականը իւր կարծիքը չաչտանեց, չիշեցնելով, որ ներկայումս վէճը վերաբերում է սահմանի գծին և ոչ թէ առանձին հողաբաժիններին: Երկու կողմի վիաների ցուցմունքն էլ հակառակ են միմեանց, վասն որոյ արժանի չեն հաստատու: Գլխաւորապէս պէտք է որդրել ճիշտ վիճելի սահմանները, բայց որովհետև բնական սահմաններ չը կան, վասն որոյ և վիաները կը դժուարանան ցոյց տալ այն գաղափարական գիծը, որ անցուցած է մակարդակի վերայ: 1874 թ. մակարդակին միանգամայն կարելի է հաւատ ընծայել, որովհետև հաստատած է օրինաւոր իշխանութեան կողմից, վասն որոյ և նա գերազանցվում է միւս մակարդակներից: Գրաւոր հաստատվում է, որ Մուխրանսկուն պատկանում է այն տարածութիւնը, որ մտնում է 19 և 20-րդ հողաբաժինների մէջ և որ նա եկեղեցուց ոչինչ չէ խել: Տասնամեայ տիրապետութիւնը չէ տալի եկեղեցուն սեպհականութեան իրաւունք, որովհետև աւաղ և քար տանելը իսկապէս տիրապետութեան նշան չէ, այլ միայն օգուտ քաղել է, այն ինչ միայն տիրապետութիւնը ծնում է սեպհականութեան իրաւունք: Այս պատճառով Պրօկուրորի օգնականը կարծում էր, որ պէտք է կոնսիստորիայի դատը մերժել:

Գաղաատանական Պալատը՝ քննելով այս գործը, իւր կողմից գտնում է, որ կոնսիստորեան դատ բացից սկիզբը ամբողջ կղզու վերայ 6000 սաժ. տարածութեամբ, որը իբր Մուխրանսկին ինքնակամ միացրել է Մաղաթեան կղզու հետ վտակները ցամաքեցնելով: Որոշելով վիճելի կղզու սահմանները՝ կոնսիստորեան հիւտիսային սահմանը ցոյց տուեց №№ 19 և 20 հողաբաժինները և Մաղաթեան կղզին: Իշխան Մուխրանսկին, չըմերժելով եկեղեցու իրաւունքները այն կղզու վերայ, որ գտնվում է Վանաց Մայր եկեղեցու գաւթի հանդէպ, չաչտանում է, որ իրան կը պատկանին միայն №№ 19, 20 և 10 հողաբաժինները, որոնք նոյն իսկ կոնսիստորեան ընդունում է վիճելի կղզու հիւտիսային սահման: Ի հաստատութիւն իւր իրաւանց այդ հողաբաժինների վերայ, որոնցից № 10 գնած է իշխ. Բարաթովից, Մուխրանսկին ներկայացրեց հաստատող գօկումենտներ (к рѣшостные документы) և այն գրաւորութիւնը, որից երևում է, որ Մաղաթեան կղզին դեռ ևս փոխարքայ Վօրօնցովի ժամանակ բաժանված է եղել հողաբաժինների, որոնց 1852 թուականին բաժնել են զանազան անձինքներին, ՚իմբիլի աչլոց և իշխան Մուխրանսկուն: Մուխրանսկու իրաւունքը այս հողաբաժինների վերայ չէ մերժում ինքն կոնսիստորեան, իսկ նորա տիրապետութիւնը հաստատում են վրկաները, դէպի Հարաւ գտնուած կղզու տիրապետութիւնը եկեղեցու կողմից հաստատվում է դաշնագրերով, Պալատի 1875 թ. վճռով և կոնսիստորիայի բերած վիաներով, այնպէս որ Պալատը երկու կողմի վիաների ցուցմունքի մէջ

ուչինչ Հակասութիւն և Հակաճառութիւն չէ տեսնում, որովհետև նոցա ցուցումները վերաբերում են հոգի այլ և այլ մասերին: Այսպէս ուրեմն, վէճը լուծելու համար հարկաւոր է միայն սրտել, թէ բնականապէս մտեղ են գտնվում 10, 19 և 20 հոդաբաժինները: 1852, 1871 և 1874 թուականների մակարդակներից երևում է, որ Մաղաթեան կղզու ամբողջելու և նորան մասերի բաժանելու առիթով եղել է շարունակ կառավարչական դրագրութիւն, որը վերջացել է նորանով, որ Կովկասու փոխարքայն Հաստատել է ամբողջ ամբողջելու գծերը, որի պատճառով և կազմել են 1874 թ. մակարդակը կղզու, բաժնելով կղզին թաղերի և մասերի: Ամբողջ ամբողջելու նախագծով այն վտակները, որոնք բաժանում էին այժմեան վիճելի կղզին Մաղաթեան կղզուց, վճռուած է եղել ցամաքեցնել և հողով լցնել այնպէս, որ դոցա տեղը տնօրինել են, կազմել VI և VII թաղերը 8, 9, 10, 19 և 20 հոդաբաժիններով, որոնք մակարդակի վերայ նշանակած են թանաքով և մակարդակի վերայ եղած բացատրութեան (էքսպլիկացիա № 7) ցույց է առել, որ 185 թ. այդ տեղերը իշխան Վորոնցովը բաժանել է զանազան անձանց, որոնցից VI և VII թաղերը պատկանում են իշխան Մուխրանսկուն: Երբ տեղումը սրտուեցան սահմանները և 1874 թ. մակարդակի վերայ անցկացան, որպիսի մակարդակ ներկայացրել էր ինքն կոնսիստորիայի Հաւատարմատարը (Արծրունին), երևեցաւ, որ Մուխրանսկու ցույց տուած սահմանը բոլորովին համապատասխանեց VI և VII թաղերի սահմաններին, որոնք մակարդակի վերայ բաց կարմիր գոյնով նշանակած են, համարեա իրանց գոյնը կորցրած, բաց այդ բաժանման ճշտութիւնը և գոյութիւնը հաստատուում է և մակարդակի բացատրութեան № 3-ով, վերաբերութեամբ թաղերի բաժանման: Այս թաղերը, ինչպէս երևում է մակարդակի բացատրութիւնից, պատկանում են իշխան Մուխրանսկուն և այս թաղերումը, նոցա հարաւային սահմաններումը պարունակվում են №№ 10, 19 և 20 հոդաբաժինները, այսինքն այն հոդաբաժինները, որոնց ինքն կոնսիստորիայի Հաւատարմատարը (Արծրունին) իր խնդրոյն մէջ ճանաչում է վիճելի գետնի հիստորիային սահմանը: Ճշմարիտ է, այս հոդաբաժինները անցնում են միւս կողմը վտակներից, որոնք բաժանում էին Մաղաթեան կղզին վիճելի կղզուց, սակայն այդ վտակները, համաձայն ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԲԱՐՁՐՈՒԹԵԱՆ Կովկասու փոխարքայի հաստատած մակարդակի, տնօրինած էր ցամաքեցնել, այն մակարդակով, որը ինքն կոնսիստորիայն ներկայացրել է ի հաստատութիւն իր իրաւանց: № № 10, 19 և 20 հոդաբաժինների սահմանը չէ անցնում վանաց Մայր եկեղեցու գաւթի գծից, իսկ բոլոր գոկու մէջնաները և վիաների ցուցմունքները, որոնք կոնսիստորիայն առաջ է բերում, վերաբերում են հէնց կղզու այն ամենամեծ մասին, որ գտնվում է վանաց Մայր եկեղեցու հանդէպ, տարածութեամբ 5146 սաժ., որի վերայ էր և պարտեզը, որի մասին խօսում են թէ վիաները և թէ դուռնակները և որը Մուխրանսկին ամենեւին չէ վիճում և ոչինչ ապացուցութիւն չկայ, որ նա խլած լինի մինչև եկեղեցու տիրապետած հողը: Այսպէս ուրեմն եկեղեցու դասը երևում է անկասկած, որովհետև մէկ կողմից՝ ոչ ոք եկեղեցու իրաւունքները կղզու 5146 սաժ. վերայ չէ խանգարել, ուր շինած էր պարտեզը, իսկ միւս կողմից կղզու մնացած տարածութիւնը մինչև վտակները, ուրեմն մօտ 854 սաժ. գեռ 1852 թուին տուած է եղել այսպէս անուանեալ № № 10, 19 և 20 հոդաբաժիններ իշխան Մուխրանսկուն և Բաւրաթովին (վերջինիս իրաւունքն ևս անցել է Մուխրանսկուն),

ինքն եկեղեցին չէ ժխտում այս իրաւունքները, ճանաչելով № № 19 և 20 հոդաբաժինները իւր հիստորիային սահմանը, հողի վէճի հետ տապալվում է և եկեղեցու վնասների պահանջը, իսկ եկեղեցու այն վէճը, որով նա պահանջում է վերականգնելու նախկին վտակները՝ անկարելի է չարգել թէ այն պատճառով, որ այդ վտակները, ինչպէս երևում է 1874 թ. մակարդակից, գտնվում են 19 և 20-րդ հոդաբաժինների մէջ, որոնք պատկանում են Մուխրանսկուն և թէ նորա համար, որ այդ վտակները Մուխրանսկին, ոչ թէ ինքնակամ ոչնչացրել է, այլ ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԲԱՐՁՐՈՒԹԵԱՆ Կովկասու փոխարքայն հաստատած վարչական տնօրէնութեան հիման վերայ Մաղաթեան կղզու ամբողջ ամբողջելու առիթով, որպիսի տնօրէնութիւն վերին իշխանութեամբ չէ փոխուած և ոչնչացրած: Չբկայ ոչ մի հիմք պահանջել այժմ 1874 թ. իսկական մակարդակը, որովհետև պատճէնի վերայ կան ամենայն հիմունք այս գործը վճռելու համար, այս պատճէնը երկրաչափն է վաւերացրել և ներկայացրել ինքն Կոնսիստորիան (Արծրունին), ուրեմն կանոնադ. 478 յօդուածի զօրութեամբ կարող է ծառայել երբև ապացուցութիւն և հաստատութիւն հակառակորդի իրաւանց: Անցնելով դատարանական ծախքերին՝ երևում է, որ կոնսիստորիայի Հաւատարմատարը (Արծրունին) ինքն է գնահատել իւր դատը 40,000 ռուբլի, որպիսի գումարից և Կոնսիստորիան պարտական է այժմ վճարել գործը վարելու վարձատրութիւնը, որովհետև սկզբից նա վարել է այնպիսի մի դատ, որը մեծաւ մասամբ ոչ ոք չէ վիճել և չէ խանգարել եկեղեցու իրաւունքը (6000 եց 5146 սաժ.), իսկ միւս մասը դատի՝ կոնսիստորիային մերժվում է: Այսպէս ուրեմն վարձատրութեան գործը վարելու համար 1540 ռուբլի, դատի անորոշ մասից՝ համաձայն 2 տակտայի յօդ. 300 ռուբլի, հաւատարմութիւն համար 1 ր. 60 կ., դատարանական մաքս 100 ր., դրուական 21 ր., պրիստաւների համար 13 ր. 50 կ., արաւազներու համար 2 ր., երկրաչափներին սկզբից վճարած 20 ռուբլի կէսը 10 ր. ընդամենը 1988 ր. 10 կ., բացի դորանից պ. պ. էքսպէրտներին (եկրաչափներին) տուած վարձատրութիւնը նոյնպէս պէտք է տուի Կոնսիստորիան: Այս հիմունքներով և համաձայն 478, 480, 366 456 և 868 յօդ. կանոն. Կատարանական Պալատը սրտում է Հայոց Վրաստանի և Իմերեթի Վիճակային Կոնսիստորիայի դատը մերժել, պահանջելով նորանից դատարանական ռուբլի ծախքերը 1988 ր. 10 կ.: Թիֆլիզի Նահանգական Կատարանի վճիռը փոխել: Էքսպերտներին վարձատրութիւն նշանակել 33 ա կ ա ն ռուբլի, պահանջելով այդ Կոնսիստորիայից:

ՆԱՄԱԿ Կ. ՊՕԼՍԻՑ

Կ. Պօլիս, 24 հոկտեմբերի 1886 թ.

Թուրքիոյ Հայ Հասարակութեան պետերուն թրքամոլութիւնը հետզհետէ ծայրայեղութեան կը հասնի: Վիկտորիա թագուհիի որդին եկաւ, ամեն ազգի ներկայացուցիչներ այցելութեան գնացին նմա, բացի Հայ ազգի ներկայացուցիչներէն, որովհետև թուրք կառավարութեան վրայ անհաճոյ ազդեցութիւն կարող էր ընել այդ բանը: Ազգային կարևոր խնդիրներ անորոշ վիճակի

մէջ կը մնան, Պատրիարքն և Քաղաքային ժողովոյ տենապետը կուզեն, որ այդպէս ալ մնան միշտ, որպէս զի, իրենց սենակետով, թուրք կառավարութեան կասկածն կամ դժգոհութիւնը չը հրաւիրեն իրենց վրայ: Տ. Հայաստանի Հացի կարօտ Հայ ժողովուրդն, որ արդէն ի վաղուց հետէ դառնապէս կը հեծէ ծանր պարտքերի տակ և տուրքերի առաջ, սիրով ընդունեց մի այլ տուրք, որով կը յուսար ազատել Երուսաղէմի ս. Յակոբայ վանքն իւր 38,000 ոսկիի պարտքէն. սակայն մինչև այսօր յուսափութիւն մ'է այս:

Յայտնի է, թէ Թուրքիոյ Հայոց ազգային վարչութիւնը, նկատելով, որ անհնարին է անհատական ուժերով վճարել ս. Յակոբայ վանքի ահագին պարտքն, խնդրեց կառավարութենէն, որ զինուորական տրոց վրայ երեքական դուրուշի յաւելուած մը լինի ի նպատակ Երուսաղէմայ պարտուց: Կառավարութիւնն ընդունեց Հայ ազգի առաջարկն և Պատրիարքարանին հաղորդեց հաշուացուցակ մը, որմէ կ'իմացուէր, թէ 500,000 արու հայեր կը վճարեն զինուորական տուրք: Այս հաշուով ամեն մի տարի, ի հաշիւ Երուսաղէմայ պարտքին, պիտի հաւաքուէր 1,500,000 զրուշ, կամ 15,000 օսմանեան ոսկի, որով կ'ենթադրուէր, թէ երեք տարի յետոյ ամբողջ պարտքը պիտի վճարուէր: Պայմանի գործադրումէն ի վեր մի տարի լրացած է և արդէն լրանալու մօտ է և երկրորդ տարին. բայց պատրիարքարանին կառավարութեան կողմէ յանձնուած գումարը հազիւ 2000 ոսկի լինի, մինչդեռ մինչև այժմ 30,000 ոսկի վճարուած լինելու էր:

Գաւառներէ ստացուած տեղեկութեանց նայելով, ամենուրեք տուրքերը, մանաւանդ զինուորական տուրքերը, ստիպմամբ կառնուեն՝ բնականաբար դոցա հետ և Երուսաղէմայ բաժինն ալ կը հաւաքուի: Բայց հաւաքուելէն յետոյ ինչ կը լինի՝ անորոշ է: Զինուորական տրոց կեդրոնական պաշտօնէութիւնն, կամ որ նոյն է՝ կառավարութիւնը, կ'առարկէ, թէ գաւառներէն ճիշտ դրամ կուգայ, սակայն նշանակուած չէ, թէ որքան գումարը Երուսաղէմայ կը վերաբերի, և այս առարկութեամբ մինչև այսօր հազիւ հազ մօտ 2000 ոսկի վճարած են: Պաշտօնէութեան այս առարկութիւնն ինքն ըստ ինքեան հիմք չունի և մեր պատրիարքարանը բացարձակապէս կարող է գրել այդ առարկութիւնն, սասայն կ'երևի, թէ իւր նուիրագործեալ քաղաքականութեան հակառակած կը լինի, թուրքին անհաճոյ գործ մը ըրած կը համարուի: Մեր Պատրիարքն և Քաղաքական ժողովոյ Ստենապետն, որ յանուն ազգի կը խօսեն միշտ, որ ազգի բարեկեցութեան համար կը գործեն, պարտեն խորհել, թէ այն Հայ ժողովուրդն, որ տարեկան 150,000 ուրբլի կուտայ Երուսաղէմայ պարտքի համար, աղքատ և Հացի կարօտ հասարակութիւն մ'է: Նոքա պարտ են խորհել, թէ հասարակութեան բազմութիւն անդամներն Հացի խնդրի համար բոլորովին կը վր-

շանան Կ. Պօլսոյ փողոցներուն մէջ, վերջապէս պարտեն մտածել, թէ նա այդ տարեկան 180,000 ուրբլին իւր չունեցածէն կը վճարէ, ապա ուրեմն Հայ ժողովուրդն արեան գնով կուտայ այդ ահագին գումարն Երուսաղէմայ համար, հետևաբար իրենք պէտք է հոգ տանեն այժմէն իսկ տէրութենէն առնուլ գանձուած գումարն, ապա թէ ոչ, յետոյ անկարելի պիտի լինի. և միթէ կարելի է յուսալ, թէ կառավարութենէն ապագային հնարաւոր պիտի լինի առնուլ 40—43,000 ոսկիի կամ 40—430,000 ուրբլիի ահագին գումարն — մանաւանդ նորա այս վիճակի մէջ: Տարէ ցտարի այս ահագին գումարի տոկոսներն ևս կը բարցուին վրան, որով և պարտքը կը բազմապատկի, միւս կողմէ ազգն ևս տարին 150,000 ուրբլի կը վճարէ պարտուց վճարման համար և ազգի գրպանէն ելած դրամն իւր նպատակին չի հասնիր: Սակայն կ'երևի, թէ մեր «ազգանուէր» կարծեցեալ ազգապետներու շատ հոգը չէ ժողովրդի գոհողութիւնները: Ինչ հարկ նոցա պարտաճանաչութիւն, երբ առանց նորա ևս ապահանեալ մամուլը կը գրուատէ նոցա անգոյ գործունէութիւնն, շուայլելով նոցա ճշմարիտ պարտաճանաչ մարդոց առաւելութիւններ, և այսպէս հանրութեան առաջ կը ներկայէ զայնս այն, ինչ որ չեն իրապէս:

Պ. Ղ. Գ. Գ. Գ.

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

«ԳԱՂԱՏՆԻՔ ԴԱՐՍԱԲԱՂԻ»

Հեղինակութիւն Ապրէսի Բէկինազարեանց, Թարգմանութիւն Մակար վարդապետի Բարխուդարեանց: Տպուած է Առանքել ազա Մատուրեանցի ծախքով, Ս. Պետերբուրգում, ներկայամէ:

Չը նայելով Մակար վարդապետի բոլոր նախազուգուութիւններին, «Գաղտնիք»-ի մէջ անգիտակցաբար սրպրտած են այնպիսի լիշատակութիւններ, որոնք ոչ միայն երևան են Հանում Բէկինազարեանցի ո՞վ կամ ինչ պաշտօնի տէր մարդիկ լինելը, այլ, մի և նոյն ժամանակ, առաջ են բերում անթիւ հակասութիւններ՝ այն բոլոր փաստերի նկատմամբ, որոնց վերայ հիմնուած է «Գաղտնիք»-ը և որոնք այդ գրքի բովանդակութիւնն են կազմում:

Ժամանակ է լուծելու «Գաղտնիք»-ի գաղտնիքը և ցոյց տալու այդ գրքի մի զոյգ երևակայական հեղինակների ո՞վ լինելը:

Մակար վարդապետը ցանկացել է, որ «Գաղտնիք»-ի մի զոյգ հեղինակները բնիկ զարաբաղցիներ լինեն: Նա որոնել է «Խամսայի Մէլիքութիւնների» 347—357 երեսներում նշանակուած Պարսկաստանի հայազգի պաշ-

տօնակալների ցուցակը: Նրանց թուում գտել է երկու զարբազանների անուններ: Իրանցից մէկը մի ներքինի է Ֆաթալի-շահի կանանցում, Աղա-Իբրահիմ անունով, իսկ միւսը՝ Վամադ-շահի կնքապահն է, Ալլահվերդի բէկ անունով: Երկուսն էլ քրիստոնէութիւնը ուրացած և մահմեդականութիւն ընդունած հայեր են:

Բայց Մակար վարդապետը, իւր վրայ վստահ լինելով, թէ նրանց կրօնափոխութիւնը կարող է ծածկել և իւր նպատակներին ծառայեցնել, — մէկին, Աղա-Իբրահիմ ներքինին, անուան մօտաւորութեան համար, դարձրել է Աբրահամ Բէկնազարեան, իսկ միւսին, Ալլահվերդի բէկին՝ դարձրել է նրա որդի Ապրես Բէկնազարեան: Մէկը «Գաղտնիք»-ի սկսողն է, միւսը՝ նրա շարունակողը և վերջացնողը:

Բերենք «Գաղտնիք»-ի վկայութիւնը.

«Մի օր հայրս ներկայացաւ Շահին — գրում է որդի Բէկնազարեանը — և հրաժեշտ տուաւ զինուորական ծառայութիւնից, պատճառաբանելով, թէ ինքն արդէն ծերացած էր և պէտք ունէր հանգստանալու: Փաթալի-Շահին նախ շնորհակալութիւն յայտնեց հօրս, սորա Պարսից մատուցած ծառայութեանց համար, ապա նշանակեց ցմահ բաւարար թուշակ և ապա սոյն խօսքերով ն երբ ին ա պ ե տ ու թ իւ լ ն ը ջանձնեց հօրս. «Յաճախ անկարգութիւններ են ծագում մեր անպիտան ներքինեաց և կանանց մէջ. վասն որոյ մենք ցանկանում ենք քեզ նման մի ազգու մարդ ն երբ ին ա պ ե տ ու թ իւ լ ն ալ, որով կը դադարին ամեն անկարգութիւն և խռովութիւն: Մեր օրինաց նկատմամբ ներքինապետութիւնն մեծ և պատուաւոր պաշտօն է, քանզի շահական ներքին պատուոյ հսկողութիւնն է և հաւատարմապահութիւնն: Նոյնպէս մեր օրէնքն արգելում է վստահել այդ պաշտօնն չներքինացած մարդոց-բայց որովհետև ժամանակն արդէն զձեզ ներքինացրած է, մենք այնպէս կը հռչակենք, որ մենք նախ զձեզ ներքինացնել տուած և ապա ձեզ յանձնած ենք այս պաշտօնը» (եր. 309):

Այդ քաղաքաւոր մէջ երկու նկատողութեան արժանի կէտ կայ. առաջինը, որ Մակար վարդապետը թաղցնում է Աբրահամ Բէկնազարեանի մահմեդականութիւն ընդունելը և դրա վրայով լուրթեամբ է անցնում, երկրորդը, որ թաղցնում է նրա ներքինիանալն, այսինքն՝ խզուիլն: Առանց այդ երկու սլոյմանների, որ օրէնքի նշանակութիւն ունին պարսից պալատում, անկարելի է ներքինի կամ ներքինապետ լինել և շահի պալատը մտնել, որքան և ծեր լինէր մի մարդ:

Բայց Մակար վարդապետը ստիպում է Փաթալի-շահին, հակառակ իւր կրօնի և պարսից արքունիքի աւանդական օրէնքների, մի խոշոր սուտ հրատարակել. «Մենք այնպէս կը հռչակենք, որ մենք նախ զձեզ ներքինացնել տուած և ապա ձեզ յանձնած ենք այս պաշտօնը»... Որքան էլ ցանկանար Փաթալի-շահը, չէր կարող այդ սուտը հռչակել, որովհետև ներքինիացնելու ծէսը գաղտնի չէ կատարվում, այլ կատարվում է հանդիսաւոր կերպով, բժիշկների և վկաների ներկայութեամբ:

Բայց Մակար վարդապետի միամտութեան ծիծաղել-

ի կողմն այն է, թէ ի՞նչ կարօտութիւն ունէր հօր Փաթալի-շահը, որ իրան թող տար՝ այս տեսակ աչքակապութիւններ անել մի որ և իցէ Աբրահամ Բէկնազարեանի վերաբերութեամբ, — այն Փաթալի-շահը, որի հարուստ կանանցը լցուած էր ուրիշ տւելի նշանաւոր հայազգի ներքինիներով և ներքինապետներով, որոնց ոչ միայն խրգել էին տուած, այլև — մահմեդականացրել էին: Բաւական է միայն ցոյց տալ նախորդ գլխում յիշած Մանուչար-խանին, որ նոյնպէս մի ժամանակ ներքինապետ էր Փաթալի-շահի կանանցում, — Խոսրով-խանին, որ նոյնպէս ներքինապետ էր Փաթալի-շահի կանանցում: 1) Ներքինիներ և ներքինապետներ էին նաև Աղա-Եաղուբը, միւս Աղա-Եաղուբ երևանցին և Աղա-Բահրամը 2): Այդ դժբախտները՝ ամենքը մահմեդականացրած հայեր էին . . .

Փաթալի-շահը ունէր երեքհարիւրի չափ կանայք և հազարից աւելի պալատական նաժիշտներ և հարձեր: Այդ բազմութիւնը կառավարելու համար, ի հարկէ, պէտք էր ներքինիների և ներքինապետների մի ստուար պաշտօնէութիւն, և նրանցից շատերն հայեր էին, կամ Աղա-Վամադ-շահի տարած գերիներէից, և կամ այն գերիներից, որ տարուեցան ռուս-պարսկական վերջին պատերազմներում, Փաթալի-շահի ժամանակ: Գերին պարսկական օրէնքով անհատ չէ, այլ իր է: Տէրը կարող է նրա հետ ամեն կերպ վարուել: Այդ էր պատճառը, որ շատերին ներքինիացրին:

Փաթալի-շահի Աղա-Իբրահիմ ներքինին — «Գաղտնիք»-ի Աբրահամ Բէկնազարեանը — Աղա-Վամադ-շահի Ղարաբաղից տարած գերիներից էր: Եւ նրան խզել էին ոչ թէ ծերութեան հասակում, այլ մանկութեան հասակում:

Պարսկաստանում ներքինիացնելը կատարվում է երկու նպատակով. մէկը՝ քաղաքական նպատակով, որ նա ժառանգներ չը թողնէ, ինչպէս, օրինակ, Աղա-Վամադ-շահը ներքինիացրած էր, — միւսը՝ հարեմական նպատակով: Թէ առաջինը և թէ երկրորդը կատարվում են մանկութեան հասակում, երբ մանուկը տակաւին անչափահաս է:

1) Թէ Մանուչար-խանը և թէ Խոսրով-խանը թէև պետական խոշոր պաշտօնակալներ էին, և երկուսն էլ ունէին անբաւ հարստութիւն, բայց հայութեան համար կորած մարդիկ էին: Մանուչար-խանի հարստութիւնը զանազան պարսիկների կոկորդն անցաւ, և մեռնելուց յետոյ նրա մարմինը տարուեցաւ Ղուվքաղաքը, թաղուեցաւ Մատումայի հուշակաւոր մզկիթում, որտեղ դրած էր և Փաթալի-շահի շիրմը: Հանդուցեալի քեռորդի իշխան Միրզա-Գաւիթ-խան Մէլիքեանը մի վառաւոր մտուռ և կանգնեցրեց նրա գերեզմանի վրայ, և մշտական թուշակով կարգեց այնտեղ աղօթող մօլլաներ, որ միշտ Ղօրան կարգային: (Պատմութիւն Նոր Զուլայի հատ. Ա. 437—444): Իսկ միւսը, Խոսրով-խանը, որ վախճանուեցաւ 1857 թուին, իւր բոլոր հարստութիւնը և Կիլանում գնած զիւղերն ու կալուածները կտակեց պարսից ներկայ շահին (Պատմ. Նոր Զաղուայի 432—437):

2) «Խոսրով Մէլիքութիւնները» եր. 348—349:

Եւ այդ ընդունուած սովորութիւններէ համեմատ, տարակոյս չը կայ, որ Աբրահամ Բէկնազարեանը պէտք է ներքինի դառնար նոյն հասակում, որ փոքր առ փոքր վարժուելով, կանանոցի կարգերի հետ ծանօթանալով, այնքան մեծանար, որ վերջը մինչև ներքինապետի աստիճանը բարձրանար:

Այն հանգամանքը, — այսինքն Աբրահամ Բէկնազարեանի մանկութիւնից Ֆաթալի-շահի կանանոցի մտնելը և այնտեղ ներքինի լինելը, — միանգամայն ոչնչացնում է «Գաղտնիք»-ի ամբողջ շինուածքը և իսպառ հերքում է այն բոլոր երևակայական սխրագործութիւնները, որ այդ գրքում կապուած են Ա. Բէկնազարեանի անձնաւորութեան հետ:

Ի՞նչու:

Նրա համար որ, Ֆաթալի-շահի կանանոցի Աղա-Իբրահիմը մի յայտնի անձնաւորութիւն է: Նա, ինչպէս վերևում յիշեցի, Աղա-Մամադ-շահի Ղարաբաղից 1795 թուին տարած գերիններից էր: Այդ թուականում նա գեռ 10—15 տարեկան մանուկ էր: Յետոյ ներքինի դարձաւ: Այժմ «Գաղտնիք»-ից բերած վկայութիւնից հաստատուում է, որ Աբրահամ Բէկնազարեանը և յիշեալ Աղա-Իբրահիմ ներքինին մի և նոյն անձնաւորութիւններն են: Եթէ այդպէս է, ուրեմն ի՞նչպէս կարող էր նա 1680 թուականներում աշակերտած լինել Գանձասարի Ներսէս կաթողիկոսի մօտ և «Գաղտնիք»-ի համար պատմական նիւթեր ընդօրինակել ¹⁾: Ախար 1795 թուականի և 1680-ական թուականների մէջ 115 տարուայ տարբերութիւն կայ: Եթէ այդ 15 տարին տանք Աբրահամ Բէկնազարեանի հասակին, երբ նա Ղարաբաղից գերի տարուեցաւ Պարսկաստան, — 100 տարին բոլորովին բաց է մնում, և այդ 100 տարուայ ընթացքում՝ գեռ չը ծնուած Բէկնազարեանի գործերը, որոնք ընդարձակ տեղ են բռնում «Գաղտնիք»-ի մէջ, ինքն ըստ ինքեան ջնջվում են, ինքն ըստ ինքեան ոչնչանում են, և զրանք մնում են միայն իբրև Մակար վարդապետի երևակայութեան ողորմելի արգասիք . . .

Կրկնում եմ, Աբրահամ Բէկնազարեանի և Ֆաթալի-շահի կանանոցի Աղա-Իբրահիմ ներքինի մի և նոյն անձնաւորութիւններ լինելը՝ միանգամայն տակնուվրայ է անում «Գաղտնիք»-ի ամբողջ շինուածքը և նրա ամբողջ բովանդակութիւնը դարձնում է բոլորովին կեղծ և առասպելական յօրինուածք: Ես զարմանում եմ, թէ ի՞նչպէս Մակար վարդապետը չէ նկատել այդ, և իրան թոյլ է տուել մի այդպիսի անհամեմատ խոշոր հակասութիւն:

Աղա-Իբրահիմ ներքինին, մանկութիւնից Պարսկաստան տարուած, կրօնը փոխած, մի մոլեռանդ մահմե-

¹⁾ Տես «Արձագանքի» № 36 իմ հետազոտութեան Բ. — րդ շրջութիւն:

դական էր, թէև ծագումով հայ: Նա իրան բոլորովին հեռու էր պահում հայերից, և մեռաւ մահմեդականութեան մէջ, մարմինը տարուեցաւ Քալբալա:

Իսկ Աբրահամ Բէկնազարեանը «Գաղտնիք»-ի մէջ ներկայանում է՝ իբրև մի քաջ հերոս, որ պատերազմում է իւր հայրենիքի փրկութեան համար, որ աշխատում է վերականգնել Ղարաբաղի ընկած մէլիքութիւնները, որ գրում է ժամանակի պատմութիւնը, որպէս զի իբրև խրատ թողնէ ապագայ սերունդներին, — և յանկարծ դուրս է գալիս, որ այդ երևելի ազգասէրը ուրիշ ոչ ոք չէ, եթէ ոչ, մի թշուառ, մահմեդականացած ներքինի, Ֆաթալի-շահի կանանոցում, որի համար ոչ հայոց ազգ կայ և ոչ հայոց հայրենիք . . .

Մակար վարդապետը այնքան մոռանում է իրան, որ այդ մահմեդական ներքինի մարմինը տանում է թաղել է տալիս Թուրքի հայոց եկեղեցու գաւթում, և մինչև անգամ Աբաս-Միրզային, Պարսկաստանի թագաժառանգին, հրաւիրում է թաղման հանդէսին ներկայ լինել . . . Ո՞վ թոյլ կը տար: Մի հայ, որ կրօնը փոխել է, եթէ տեսնելու լինեն նրան մի այլ հայի հետ խօսելիս, կամ հայի տուն մտնելիս, իսկոյն մահմեդականները կը քարկոծեն, ուր մնաց, որ նրա մարմինը թոյլ տալին հայոց եկեղեցու գաւթում թաղելու:

Այդ բոլորը, թէ Աբրահամ Բէկնազարեանին Ֆաթալի-շահի կանանոցում իբրև քրիստոնէայ պահելը և թէ նրա մարմինը հայոց եկեղեցու գաւթում թաղել տալը, — ես վերաբերում եմ Մակար վարդապետի, որպէս կրօնաւորի, քրիստոնէական ջերմեռանդութեանը, բայց այս տեսակ ջերմեռանդութիւններ պատմութեան համար ոչինչ նշանակութիւն չունեն:

Նոյն ջերմեռանդութիւնը Մակար վարդապետը գործ է դնում և Աբրահամ Բէկնազարեանի որդի Սպարեանի վերաբերութեամբ և նրան Երուսաղէմ է ուղարկում . . . բայց իսկոյն կը տեսնենք, որ նրա մարմինը նոյնպէս, իւր հօր նման, թաղուեցաւ Քալբալայում . . .

Սպարեան Բէկնազարեանը, «Գաղտնիք»-ի շարունակող և վերջացնող հեղինակը, և իւր աշխատութիւնը 1881 թուին Մակար վարդապետին յանձնող հեղինակը, յանկարծ մի և նոյն գրքում ներկայանում է Ալլահվէրդի կամ Ալլահվէրդի-բէկ անունով:

»Չմոռանամ ասել որ հայրս կոչվում էր Իբրահիմ-Աղա, եսկ ես կոչվում էի «Մերզա-Ալլահվէրդի», սակայն չաճախ գործածական էր իմ նախնիս «Ալլահվէրդի-Բէկ» անունն» (Եր. 312):

Ո՞րտեղից ստացաւ նա այդ մահմեդական անունը և ի՞նչու:

Այդ հարցին կը պատասխանէ ինքը Սպարեան Բէկնազարեանը.

»Իսկոյն (Աղա-Մամադ-շահ) զիս որդեգրելով ասաց. «Սիրուն և անմեղ փոքրիկ, դու այդ մանկական հասակում ցանկացած էս Շահը տեսնել: Աղա-Մամադ-խանն

այնքան ապաշնորհ չլինիր, որ քս այդ ազնիւ փափազը ըստ արժանոյն զնահատել չգիտնայ: Դու այսուհետեւ Աղա-Մամադ-խանի հոգեկիր օրդին ես, բայց այն պայմանաւ, որ դու անխախտ պահես քո պապեանական հաւատը, լեզուն: Յետոյ իմ Ապրես անունը «Ալլահվերդի» փոխեց, եւր թէ ինքն ներքինի և անզաւակ գուով՝ Աստուած պարգևեց իրան մի օրդի Աստուածատուր անուամբ» ¹⁾ (եր. 136):

Մակար վարդապետը այնպէս թեթեւ կերպով է վերաբերվում պատմական փաստերին, կարծելով թէ, ինչպէս որ ինքը ցանկանում է, այնպէս ևս կարող էր լինել:

Աղա-Մամադ-շահը, պարսից ներկայ Ղաջարեան տոհմի թագաւորութեան հիմնադիրը, որովհետեւ ինքը զաւակ չունի, որդեգրում է մի խնամախոսի հայ տղայի, որ իւր գահի ժառանգը լինի,—այն ևս այն պայմանով, որ նա «անխախտ պահէ իւր պապեանական հաւատը և լեզուն» . . . Պարսից գահի վրայ քրիստոնէայ թագաւոր . . . Այստեսակ երազների վրայ մտածելն անգամ լիմարութիւն կը լինէր:

Աղա-Մամադ-շահը, իրաւ է, զաւակ չունէր, բայց նա արդէն որդեգրել էր իւր եղբօր որդի Բաբա-խանին, որ նրանից յետոյ թագաւոր դարձաւ Փաթալի-շահ անունով: Այլ ևս ինչ պէտք ունէր Ապրես Բէկնազարեանին. . .

Բայց չը նայելով Աղա-Մամադ-շահի ցանկութեանը (կամենում եմ ասել Մակար վարդապետի ցանկութեանը), փոքրիկ Ապրեսը անխախտ չը պահպանեց իւր «պապեանական հաւատը և լեզուն»: Այնօրից, որ արուեստաւ նրան Ալլահվերդի անունը, հէնց այն օրից թլփատութիւն ընդունեց. . .

Մակար վարդապետը իւր Ալլահվերդի-բէկին նույնացրել է «Խամսայի Մէլիքութիւնների» (350 եր.) Ալլահվերդի-բէկի հետ, օգուտ քաղելով միայն այն հանգամանքից, որ երկուսն էլ զարաբազցի հայեր են: Խնչու:—

Նրա համար, որ «Խամսայի Մէլիքութիւնների» Ալլահվերդի-բէկը Մամադ-շահի «մօհրդարն» է, այսինքն կնքապահ է. շահի դիւանից որքան հրովարտակներ դուրս գալու լինին, նա պէտք է կարգայ, արքայական կնիքով կնքէ, յետոյ թագաւորի ստորագրութեանը ներկայացնէ: Իսկ մի այդպիսի մարդ Մակար վարդապետին պէտք էր, որ նոյն հրովարտակների գաղտնիքը մտցնէ «Գաղտնիք-ի մէջ» . . .

Հարցնող լինի, թէ ինչ գաղտնիքներ դուրս բերեց Ալլահվերդի-բէկը շահի դիւանից, որոնք մեզ յայտնի չէին մինչև «Գաղտնիք»-ի լոյս տեսնելը: Այդ թողնենք:

Միայն կարևոր ենք համարում նկատել, որ այն բոլոր ջանքերով, որով Մակար վարդապետը աշխատել է՝

¹⁾ Ալլահվերդի թուրքերէն նշանակում է Աստուածատուր: Աղա-Մամադ-շահը պարսիքերէն էր խօսում, նա թուրքերէն չը գիտէր, եթէ ցանկանար Աստուածատուր անունն համանիշ մի անուն տալ Ապրես Բէկնազարեանին, նրան Խուզադատ կը կոչէր և ոչ Ալլահվերդի:

իւր Ալլահվերդի-բէկին զանազան ոլոր-մոլոր ճանապարհներով մտցնել շահի դիւանի մէջ, — դրանից ոչ միայն որ և է իրական օգուտ չէ քաղել, այլ իրան դրել է անխուսափելի հակասութիւնների մէջ:

Ահա ինչու.

Մահմադ-շահի կնքապահ Ալլահվերդի-բէկը մանկութիւնից Պարսկաստան տարուած և մահմեդականութիւն ընդունած մի գերի էր: Նա ուրացել էր որպէս հայութիւնը, նայնպէս և հայոց կրօնը: Նա հայերէն գրել-կարգալ անգամ չը գիտէր: Ուրեմն ինչպէս հեղինակեց «Գաղտնիք»-ը:

Եւ, վերջապէս, նա ապրեց որպէս մի մոլեռանդ մահմեդական, հոգւով և սրտով,—և մեռաւ որպէս մահմեդական: 1847 թուին նրա մարմինը տարուեցաւ Քալբալա և թաղուեցաւ Իմամների սուրբ հողի մէջ:

Եւ ահա նոր հրաշք.—

Նոյն Ալլահվերդի-բէկն («Գաղտնիք»-ի հեղինակ Ապրես Բէկ.) Քալբալայից յարութիւն է առնում, 43 տարի ճանապարհորդութիւններ է անում, այցելում է Հայաստանի բոլոր վանքերին (եր. 394—395) իւր մեղքերը քաւում է, և յետոյ, 1881 թուին գալիս է Շուշի, մուրացկանի կերպարանքով ներկայանում է Մակար վարդապետին, և—«Գաղտնիք»-ը յանձնում է հայր սուրբին. . .

Ր Ա Ֆ Յ Ի

(Կը շարունակուի):

Ֆ Է Լ Ի Է Տ Օ Ն

ՆԻԿՈՄԻԻՒՅՑ ԳԱԻԱՌԻ ՀԱՅ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԻՒՆԸ Բ.

Խորէն եպիսկոպոս Աշըգեան.—Ուղեորութիւն յԱղաբազար.—Աղաբազարի ազգաբնակութիւնն.—Հայեր, նոցա եկեղեցիներն և ուսումնարաններն.—Հայ իգական սեռն.—Լսարաններ.—Միտիներական բարձրագոյն վարժարան օրիորդաց.—Տօնավաճառ.—Կովկաս լեռանց ցեղեր.—Չերքէզներ, Լեզգիներ, Վրացիներ.—Գաղթականք Անիի.—Յուշագած Հայեր.—Սեւաստ.—Կէլվէի Հայոց բառբառը:

Արմաշի վանքը հասնելէ կէս ժամ յետոյ, այցելութիւն տուի վանահայր Խորէն եպիսկոպոս Աշըգեանին իւր «Վեհարան»-ի մէջ. եկեղեցւոյ գաւիթէն բարձրանալով, փայտաշէն սանդուխներով մտայ նրբանցք մը, որով երկու կողմը կը գտնուին ընակելի սենեակներն. այստեղ, նրբանցքի մէջ, բոլորովին լի էին ուխտաւորաց ընտանիքներ, խառնադանճ կերպիւ տեղաւորուած աստ անդ. յառաջանալով դէպի հիւսիսային կողմն, բարձրացայ մի քանի աստիճան. աստ կը ներկայէր բաւական կանոնաւոր սրահ մը, որոյ երկու կողմն նմանապէս կառու-

ցուած էին սենեակներ, որոցմէ մին էր վանահօր սենեակ, որ բաւական գեղեցիկ կերպիւ զարդարուած էր: Անդ մտնելուս նշմարեցի երեք հոգեւորականներ, որոցմէ մին վանահայրն էր, միւսն Նիկոմիդիոյ առաջնորդն և երրորդ՝ վանքի միաբաններէն Ներսէս վարդապետ, որ 8—9 տարի առաջ ուսուցչութեան պաշտօն վարած է էջմիածնայ ճեմարանի մէջ: Վանահայրն մօտ յիսուն տարեկան անձ մ'է, պարթև և պատկառելի կերպարանքով. ծնած է Նիկոմիդիոյ գաւառի Եալովայ գիւղի մէջ. գրեթէ իւր ամբողջ կեանքն անցուցած է Արմաշի վանքի մէջ, հեռու հանրային կեանքէն, հետեաբար և սակաւ տեղեակ հանրային գործունէութեան: Արդէն Ա.-ին նամակով յիշած էի, թէ Խորէն եպիսկոպոս, որպէս գործիչ, ոչինչ արժանաւորութիւն չունի և, ի հաստատութիւն, յառաջ բերուած էին իրողութիւններ, իսկ որպէս գրագետ և Աստուածաբան լաւ համբաւ ունի: Այցելուների յաճախ երթևեկութեան պատճառաւ կարելի չեղաւ կարևոր խօսակցութիւն ունենալ, միայն թէ խօսակցութեան մի կէտէն հասկացայ, որ գեր. վանահայրը չափէն աւելի մեծ զաղափար ունի իւր վանքի վրայ և համեմատութեան կը դնէ էջմիածնայ վանքի հետ . . .

Մի քանի օր լետոյ ուխտաւորներն սկսան ցրուիլ. նոցա մեծ մասը Աղաբաղարցիներ էին: Ուխտաւորաց մի մասն իրենց տուններէն մեկնելէն առաջ կերթային վանքի գիւղն, Խասկալ, որ զուարճալի տեսարան մ'ունի: Այդ գիւղի բնակիչներ ցաւ ի սիրտ կը պատմէին, թէ եօթն տարիէ ի վեր չեն վայելած իրենց հովիւի, վանահօր այցելութիւնն, մինչդեռ հազիւ կէս ժամ հեռի կը բնակի իրենցմէ: Արպիսի անարժան վարմունք կաթողիկոսական երրորդ ընտրելիի մը համար: Չորս հինգ ժամ լետոյ մեր ճանապարհը շարունակեցինք դէպի Աղաբաղար. շրջակայ տեսարանները բաւական գեղեցիկ էին, տեղ տեղ ճանապարհի երկու կողմի ծառերի ուտերն, իրար խառնուելով, կը յօրինեն հիանալի հովանի մը, որոյ ներքեւէն, բաւական երկար ժամանակ կ'անցնի ուխտաւորաց գոմեշաքարը կառքերու երկայնաձիգ շղթան: Վերջապէս կը հասնինք Սաբանջա գետակի եզերքն, մեր աչաց առաջ կը ներկայանայ քառակուսի ընդարձակ մարդագետին մը, շրջապատուած մշտադալար ծառերով, որ մին միւսի վրայ բարձրանալով՝ կանաչագորգ բնական լեռնաշղթայի գիւրք կը ստանային: Այս ակնապարար տարածութիւնը, մի ծայրէն մինչև միւսն, ծածկուած էր ուխտաւորաց հարիւրաւոր սայլերով, ամեն կողմերէ օդի մէջ վեր կ'ելնէին մուխի ոլորտապտոյտ սիւնակներ: Ուխտաւորներն իջած էին աստ՝ հանգիստ ունելու ճանապարհի յոգնութիւնէն, և երեկոյեան ընթրիքն ընելու համար: Երկու ժամուան հանգիստ է լետոյ դարձեալ շարունակեցինք ճանապարհն և գիշերուան ժամ 9-ին հազիւ հասանք քաղաք, որ գաշտի վրայ

կառուցուած լինելով, մինչև ներս մտնելն ամենևին չէր երևեր մեր ակաց: Մութի մէջ հազիւ հազ կընշմարենք տուններն, որ մեծ մասամբ եւրոպական և կէս-եւրոպական ձևով շինուած էին, ամենքն ալ երկու յարկէն ոչ պակաս: Ամեն մի տան առաջ կամ կողքին կը նշմարէին ծառազարդ մեծ ու փոքր պարտէզներ: Հետեալ օր, ամբողջ քաղաքն նշմարելու դիտուածով, ելայ տան ամենավերին յարկն, բայց անկարելի եղաւ տեսնել ամբողջն, որովհետև քաղաքի կեդրոնը ցած է, կեդրոնէն քիչ անդին բարձր է և ապա նորէն ցած: Այնուամենայնիւ այդ բարձր տեղէն սքանչելի տեսարան մը կը պարզուէր. ամբողջ քաղաքը կը նմանէր կանաչապատ գեղատեսիլ պարտէզի մը. քաղաքէն կը նշմարուէին ընդամազ մարդագետիններ, շրջապատուած ծառերով, և այսպիսի մարդագետինները բազմաթիւ էին. իսկ զոցանէ ևս անդին՝ լեռանց մթնշաղ շղթաներ: Աղաբաղար կը գտնուի Սև ծովէն չորս ժամ դէպի արևմտա-հարաւ, Սանքարեա պատմական գետի աջ ափի վրայ: Ետտ անգամներ այս գետը կը բարձրանայ և կ'ողողէ քաղաքի կէս մասն. այս միջոցին քաղաքի բնակիչները նաւակներով կ'երթան եկեն: Պատմական գիտելիքներ չկան քաղաքի մասին, նրմանապէս անյայտ է նորա կառուցման թուականը, և դժուար կարելի է իմանալ այս, քանի որ Օսմանական կառավարութիւնը և սովորութիւն ունեցած չէր արձանագրել այսպիսի կարևոր կէտերն, այլ լոկ զբաղեալ էր պատերազմներով և հարստահարութեամբ: Սակայն աւանդութիւնը կրօնէ, թէ մօտ 4—500 տարի առաջ բազմաթիւ հայեր գաղթելով Ատրպատական աշխարհէն և Սիւնեաց գաւառէն, եկած և բնակութիւն հաստատած են այս կողմերն, առանձին գիւղեր կառուցանելով աստ իրենց համար. այդ գիւղերէն մին եղած է և այս քաղաքն, որ չորս կողմէն գետերէ շրջապատուած լինելով և միւս կողմէ միշտ տօնավաճառ տեղի ունենալով անդ, Ա. գ. ա. Բ. ա. գ. ր., այսինքն Տօնավաճառի-կղզի, անունը ստացած է: Այս քաղաքն, որ գտնուի Պօլսոյ, Պարսկական ծոցի և Հնդկաստանի առևտրական մեծ ճանապարհի վրայ, Նիկոմիդիոյ գաւառի ամենէ մեծ քաղաքն է և ունի աւելի քան 30,000 բնակիչ, որոց 15,000-ն հայեր են, 13,000-ն թուրք և մնացեալն յօյն: Առևտուրն և արհեստները ամբողջապէս Հայոց ձեռքն են և մասամբ Յունաց: Արհեստներու մէջ զլիաւոր տեղը կը բռնէն կաշեգործութիւն և մետաքսագործութիւն: Թէև տեղույն առևտրական շրջանը շատ սահմանափակ է, հետեաբար և մեծ հարստութիւն անկարող է գտնուել անդ, սակայն և այնպէս տեղական Հայոց եկեղեցիները, դպրոցները և կրթական ծախքը կ'ապացուցանեն, որ նոքա թէ և քսակով աղքատ, այլ սրտով հարուստ և հանրային գործունէութեան մէջ պարտաճանաչ մարդիկ են: Ունեն չորս եկեղեցիներ, որ իրենց ընդարձակութեամբ և գեղեցկութեամբ լետ չեն մնար Կ. Պօլսոյ հայոց և Թիֆլիսի հայոց եկեղեցիներէն և համեմատաբար զերտ-

դանց են նոցանէ, մանաւանդ վերջիններէն:

Եկեղեցիների բոլոր դրամները պէտք է որ յատկացուին կրթական նպատակի համար, և ըստ օրենսի կը տրուին իրանց թաղի ուսումնարաններուն: Ուսումնարաններն, որոց թիւը չորսի կը հասնի, պէտք է խոստովանել թէ անյուսալի յառաջագիծութեան հասած են այս ասիական քաղաքի մէջ, ուր դեռ ևս մուտ չէ գտած եւրոպական նորաձևութիւնը, մանաւանդ իգական սեռի մէջ: Այս ուսումնարաններն իրենց կրթական ծրագրով, կարող են հաւասարիլ Կաւկասիոյ «քաղաքային-միջնակարգ» դպրոցներուն: Երկսեռ ուսանողաց թիւը կը հասնի 2000-ի, իսկ ուսուցչաց թիւն՝ 35—40-ի, տարեկան կրթական ծախքն է 12,000 ռուբլի այդ չորս դպրոցներու համար: Թուրքիոյ մէջ դժուարաւ կարող ենք գտնել ուրիշ հայաշատ քաղաք մը, որ այսպիսի մեծ գումար ծախսէ կրթական նպատակի համար, և մինչև իսկ Կ. Պօլիս, բաղդատամբ, աւելի նուազ կը ծախսէ. այսպէս՝ Կ. Պօլիս իւր շուրջ 200,000 բնակիչներով ազգային վարժարանների համար կը ծախսէ 100,000 ռուբլի, մինչդեռ Ադաբազար իւր շուրջը 15,000 հայերով նոյն նպատակի համար կը ծախսէ 12,000 ռուբլի: Առաջնորդ Ստեփան Եպիսկոպոս, նկատելով, որ անհնարին է աշակերտաց թոշակներով և եկեղեցու եկամուտներով պահպանել կանոնաւոր վարժարաններ, իրեն սկզբունք ըրած է՝ հաստատուն կալուածներ նշանակել վարժարանաց. այսպէս ըրած է և Ադաբազարի մէջ: Իւր առաջնորդութեան սկզբին, գալով Ադաբազար, աղաչելով ու բռնութեամբ և տունէ տուն շրջելով, դրամ հաւաքեց ժողովրդէն մօտ 30,000 ռուբլի և հաստատեց մարմարաշէն գեղեցիկ բաղնիք մը, որոյ հասոյթն յատկացուած է ազգային վարժարաններուն: Առաջնորդն ասով թէ տարեկան 2—3000 ռուբլի եկամուտ մը շահեց դպրոցների համար և թէ նախատական և անտանելի վիճակէ մը ազատեց հայ կիներն, որ մինչև այն ժամանակ թուրքի բաղնիքներ երթալով, ամեն տեսակ նախատանաց և անպատուութեան կենթարկէին թուրքաց կողմէ, թէ թրքական փողոցներու մէջ, ուրտեղէն պարտաւոր էին երթալ, և թէ բաղնիքների մէջ: Այս մեծ չարիքէն ազատուելու համար միայն, ամբողջ Ադաբազարի հայ հասարակութիւնը խորին համակրութիւն կը զգայ Առաջնորդի նկատմամբ:

Ադաբազարի հայ իգական սեռն աւելի մեծ փափաք ունի դէպի դպրոցն, քան արականն. դպրոց յաճախող օրիորդաց թիւը կը հասնի հազարի. բաց աստի բաւական ուսումնական մանկամորդ կին մը հաստատած է ձրի դպրոց մը, ուր իւրաքանչիւր օր ամեն կարգի կիներ կերթան ձրիպէս գրել-կարդալ ուսանելու. յետոյ այդ ամեն կիներն, որոց թիւն իմ գնացած օրը 60-էն աւելի էր, կ'սկսին երգեցողութեամբ զբաղիլ. նոքա հիւանալի կերպիւ կ'երգէին շարականներ, պատարաղի բոլոր արարողութիւնն և ազգային երգեր: Իսկ

ամենէ հետաքրքրականն էր կանանց լսարաններն, որոց բացումն տեղի կուենայ իւրաքանչիւր կիրակի դպրոցների մեծ սրահների մէջ:

Կիրակի օր մ'էր, ճաշէն յետոյ, փողոցների մէջ միայն կարելի էր տեսնել կիներ, հասուն և փոքր օրիորդներ, որ կը շտապէին իրենց թաղի դպրոցները: Այս միջոցին մի քառորդ ժամ յետոյ շատ քիչ տուների մէջ կարելի էր գտնել կիներ, որովհետև գրեթէ կէսէն աւելին լսարան գնացած էին: Քաղաքի քարոզիչ-վարդապետի հետ միասին գնացինք գլխաւոր լսարանն, դեռ ևս բաւական հեռուէն կը լսէինք բազմաթիւ կանանց ներդաշնակ ու քաղցրաւոր երգեցողութիւնն: Մեր ներս մտած ժամանակ ամբիոնի առաջ կանգնած տեսանք վեցամեայ աղջիկ մը, որ իւր մանկական թոթով լեզուով հասկանալի եղանակաւ և ձեռքերը շարժելով, «ուսման մեծ պէտք»-ը կը ճառէր իւր ունկրնդիւններուն, որոց թիւը կը հասնէր 5—600-ի, անտարակոյս, ամենն ալ կիներ: Իսկ ինչն ամբողջովին լի էր, դասարանական նստարանների վրայ այլ ևս տեղ չը լինելով, մի մասն նստած էր յատակի վրայ և մնացեալն ոտի կեցած կը մնար: Արական սեռն իրաւունք չունի ներկայ գտնուել աստ. միայն թէ քաղաքի չորս լսարաններէն ամեն մին ունի մի քարոզիչ-քահանայ, որ իւրաքանչիւր կիրակի բարոյական քարոզներ կը խօսի: Այս լսարանի քարոզիչն ևս չիշեալ վարդապետն էր: Քանի մը վայրկեան յետոյ քարոզիչ վարդապետն, բեմը ելնելով, սկսաւ խօսել ամուսնութեան վրայ: Վարդապետը խոյս կուտար երեւական գաղափարներէ և ամեն անգամին ընտանեկան կեանքէն օրինակ կը բերէր՝ ցոյց տալու համար երջանիկ ամուսնութեան բարերար արդիւնքներն և ազդեցութիւնն, և ամուսնալուծութեան աղետաբեր հետեանքները: Քարոզը տեւեց մի ամբողջ ժամ, յետ որոյ քարոզիչն իսկոյն մեկնեցաւ, ըստ օրինի, և կանայք սկսան իրենց մտաւոր զբաղումներն. կանանց մէջէն ոմանք կ'ելնէին, կը բացատրէին այն բարերար արդիւնքներն, զոր արտադրած է կանանց այս լսարանն, մի ուրիշն կ'առաջարկէր, որ կանայք համոզեն իրենց ամուսիններն՝ որպէս զի նոքա ևս, փոխանակ իրենց կիրակնօրեայ ժամանակներն սրճարաններու մէջ և դատարկապորտութեամբ անցնելու, ելնեն նոյնպէս և իրենց նման լսարաններ բանան: Թէև այդ կիներ կարելի է ըսել դեռ ևս զարգացման հազիւ միջնակարգ աստիճանի վրայ կը գտնուին, սակայն և այնպէս կատարելապէս զարգացեալ կանանց չափ կրթասէր կ'երևէին, բայց ցաւալին այն է, որ տակաւին պարագայները չեն ներեր, որ նոքա կանոնաւոր յառաջագիծութիւնն ընեն իրենց նպատակի մէջ, որովհետև այլ մարդոց զարգացման աստիճանն այնքան բարձր չէ, որ ըմբռնեն կանանց այս աղիւ զգացումն և օգնեն նոցա: Չորս լսարանների մէջ բոլոր յաճախողների թիւն է 2000 առ հասարակ, իսկ երբեմն պակաս և երբեմն աւելի:

Հայ Հասարակութեան մէջ կայ 30—40 ընտանիք բողոքական, իսկ կաթողիկէ—ամենեւին: Բողոքականութիւնն 20—30 տարիէ աւելի կայ, որ մուտ գտած է այս քաղաքի մէջ, սակայն մինչև այսօր հազիւ հազ ունեցած է այդքան հետևողներ: Այս կատարեալ անաշողութիւնն վերջերս հարկադրեց Ամերիկայի միսիոններանական Բուռգ ընկերութեան, աւելի ազդու միջոցներու զիմել: Այս նկատմամբ Բուռգի ընկերութիւնն, որոյ նպատակն է բողոքականութիւն ծաւալել Թուրքիոյ մէջ, անցեալ ուսումնական տարուան սկիզբին Նիկոմիդիոյ Պարտիզակ գիւղաքաղաքէն աստ պոխադրեց Աղջկանց Բարձրագոյն Վարժարանն: Սակայն տեղույս բողոքական Հասարակութիւնն ընդունեց մի պայմանաւ, որ դպրոցը բոլորովին իրենց յանձնուի. պայմանն ընդունուեցաւ, բայց կրօնի ուսուցիչն միսիոնարուհի է, բաց աստի կան երկու միսիոնարուհիներ ևս, որ անգլիերէն և այլ դասեր կուտան: Ատաբազար երթալէն միերկու օր յետոյ դպրոցի խնամակալներէն միոյն հետ այցելութեան գնացինք այդ վարժարանին: Դեռ ևս վարժարան չհասած խնամակալը պատմեց, թէ վարժարանը բոլորովին անկախ է միսիոնարներէն, թէ նիւթապէս և թէ բարոյապէս: Նորա վարչութիւնը կը գտնուի քանի մը հայ-բողոքականներէ կազմեալ խնամակալութեան մը հսկողութեան ներքև, յայտնեց նմանապէս, թէ կրօն դաս չի տրուիր, այլ միայն ս. գիրք՝ առանց մեկնութեան կամ քննութեան: Ի վերջոյ Հասանք դպրոցն, որ քաղաքի գեղեցկագոյն շէնքերէն մին է: Դասատուութեան ձևն և դասարաններու կազմակերպութիւնն ամերիկեան են: Աւսումնարանը ունի չորս դասարան, հետևաբար չորս տարուան ընթացք: Իւրաքանչիւր տարուան մէջ երեք անգամ քննութիւն կը կատարուին և ամեն մի քննութենէ յետոյ նոր աւարկաներ կ'աւելցուին Հնի վրայ. այսպէս ուրեմն ամեն մի դասարան կը բաժնուի երեք շրջանների: Բարձրագոյն դասարանի մէջ կը դաստիարակուին. բնագիտութիւն, քիմիաբանութիւն, բուսաբանութիւն, բարոյական գիտութիւն, պատմութիւն հայկական գրականութեան, անտեսագիտութիւն և այլն և այլն: Աշակերտուհեաց թիւն է առ այժմ հարիւր, որոցմէ 20-ը գիշերօթիկ են: Եւ թէև դպրոցը կը կրէ «Հայուհեաց Բարձրագոյն Վարժարան» տեսողոսն, բայց և այնպէս շատ քիչ լուսաւորչական աշակերտուհիներ կարելի է տեսնել այդտեղ, որովհետև Հայ Հասարակութիւնը կը զգայ, որ թէ որքան և անխտրականութեան զիմակի ներքև ծածկուած է նորա նպատակի կէտն, սակայն բուն ոգին կը ծառայէ բողոքականութեան ծաւալման համար: Հասարակութեան այս զգացումն սխալ չէ, արդարև: Որովհետև այնպիսի մարդիկ, որ կաթողիկէներու պէս, կը կարծեն թէ իրենց դաւանութենէն դուրս չկայ փրկութիւն, այդպիսի մարդիկ, չեն կարող լինել անխառն ազգասէր և լոկ փափագող ազգային յառաջագիմութեան: Ազաբազարցիք խոյս

կուտան միշտ կրօնափոխութենէ, որովհետև նորա վրնասակար հետևանքն իրենց աչքի առաջ է . . .

Հասաւ երկուշաբթին: Այդ օր քաղաքի մէջ արտասովոր կենդանութիւն կը տիրէր: Եուկան, մանաւանդ, լի էր բազմազան մարդիկներով, որ շրջակայ գիւղերէն մինչև մի երկու օր ճանապարհ հեռիէն եկած էին սպրանքներ գնելու: Ամեն երկու շաբթի տօնավաճառ կայ այս քաղաքի մէջ, և սոյն պատճառաւ քաղաքը կը լցուի բազմութեամբ: Դիտողութեան արժանի կէտն, ըստ իս, ոչ այնչափ տօնավաճառ էր, որչափ Կաւկասեան լիբանց այլ և այլ ցեղերի ներկայութիւն իրենց զգեստներով: Այստեղ կարելի էր տեսնել առաւելապէս չերքէզներ և լեզգիներ, սպա վրացիներ և այլն:

Ռուսաց Կաւկասիոյ տիրապետութենէն ի վեր, Կաւկասիոյ լեռնաբակ ցեղերն, Ռուսաց հետ ունեցած այլ և այլ բաղխման միջոցին յաղթուելով, գաղթած են թուրքիա: Նոքա ևս մահմեդական լինելով թուրք կառավարութիւնը լաւ ընդունելութիւն ըրած է նոցա ու տուած բնակութեան տեղեր և գործելու ազատութիւն կամ մի նոր պատիժ քրիստոնէից համար: Մինչև Ռուս-Թրքական վերջին պատերազմը, այդ ցեղերը գլխաւորապէս կը բնակէին Բուլղարիոյ Արևելեան Ռումելիի մէջ ու կը կեղեքէին տեղական ազգերն, պատերազմի ժամանակ պարտաւորեալ Թուրքիա գաղթեցին. կառավարութիւնն զայնս ևս զրկեց իրենց հայրենակիցների մօտ, Նիկոմիդիոյ գաւառն, և այժմ կը գրաւեն ամբողջ գաւառն: Երկրի ծերունիները կը պատմեն, թէ այդ ցեղեր երբ եկան, բոլորովին աղքատ էին, չունէին ո՛չ անկողին ո՛չ կոշիկ և ո՛չ գլխարկ անգամ: Ամենի զգեստները պատառատուն էին: Կառավարութիւնը հարկադրեց ժողովրդեան օգնել նոցա: Նոքա թողլով քաղաքներն՝ սկսան լեռների մէջ բնակել, կամաց կամաց սկսան զոգութիւններ և աւառութիւններ ընել: Մինչև նոցա գալն հայ ժողովուրդն այժմեան համեմատ շատ հարուստ էր, ունէր ոչխարներու, կովերու և մինչև իսկ ձիերու բազմաթիւ հոտեր, զորս ամենն ալ պարբերաբար կողովտեցին այդ ցեղերն: Աղքատացուցին ժողովուրդն և իրենք հարստացան: Ժողովուրդը կը զիմէր կառավարութեան, բայց կառավարութիւնն անուշադիր կը մնար, որովհետև չերքէզներ և այլ ցեղերն հզօր պաշտպաններ ունէին Պալատի մէջ: Վերջին պատերազմի ժամանակ այդ ցեղերն աւելի մեծ վնասներ պատճառեցին հայոց: Ամբողջ ժողովուրդն սոսկումի մէջ էր նոցա ձեռքէն. ըստ որում կառավարութիւնն առանձին զօրագունդ մը կազմած էր նոցանէ և երկիրը յանձնած էր իրենց: Կաւկասեան այս լեռնաբնակ ցեղեր այժմ ունին մեծ հարստութիւն, ոմանք ունին ահագին տարածութեամբ հողեր, բազմաթիւ ագարակներ, գիւղեր և այլն. մի խօսքով երկրի բնական հարստութիւնը մեծ մասամբ

այս ու այն չէր քեզ բէլի ձեռքը կը գտնուի: Չերքեզներն ու լաղերն այժմ լաւ են հայոց հետ և ընդհակառակն թշնամի՝ թուրքաց:

Տօնավաճառի օրն առիթ եղաւ շրջել քաղաքի մեծ մասն: Քաղաքն առ հասարակ աւելի կանոնաւոր է սիական Թուրքիոյ միւս քաղաքների բաղադրամամբ, փողոցներն ընդհանրապէս լայն են, 20-40 արջին լայնութեամբ, և մեծ մասամբ ծառազարդ: Նոցա մի մասն քարայտակ է և մնացեալ մասերն ևս կը յատակուին: Տեղական հայերը մտադիր են 1890-ին տօնել իրենց քաղաքի հինգհարիւրամեակը:

Մի քանի օր յետոյ թողի այդ քաղաքն ամենամեծ դժուարութեամբ, ըստ որում նորա անկեղծ և ջերմ հիւրասիրութիւնն, որ ընդհանրական է, թող չէր տար բաժնուիլ անկէ: Առաւօտեան ժամ 8-ին քաղաքային բժշկի հետ ճանապարհ ընկանք դէպի Արևելք. քաղաքէն դուրս գալուն պէս մեր առաջ սկսան պարզուիլ լեռնային և դաշտային անտառապատ սիրուն տեսարաններ, բազմաթիւ տեղեր կը ներկայէին կանաչազարդ գեղեցիկ մարգագետիններ, որ քառակուսի, բոլորակ, եռանկիւնի և բազմանկիւնի ձևերով շրջապատուած մեծ ու փոքր ծառերով, բնութեան հիանալի պատկեր կ'ընծայէին: Ճանապարհին այստեղ այնտեղ կ'երևէին չերքեզական գիւղեր: Երկու ժամ յետոյ, շեղուելով մեծ ճանապարհէն, ուղղուեցանք դէպի հիւսիս, ուր նմանապէս կը գտնուի հայկական ստուար գաղթականութիւն մը: Կէյվէի գաւառի մէջ կը գտնուէինք: Տեղական բնակիչները կը խօսէին մի տեսակ անհասկանալի հայերէնով: Հետաքրքրուելով նոցա անցեալով, հետեւեալ կարևոր տեղեկութիւնները կարողացայ իմանալ:

Իրենք իրենց բուն Անի մայրաքաղաքէն կը համարեն, և պարծանքով կը յայտնեն, թէ «մեր լեզուն բուն այն անարատ լեզուն է, որով կը խօսէին Անիի բնակիչները»: Բագրատունեաց այդ մեծ մայրաքաղաքի կործանումէն յետոյ, սոքա գաղթած են՝ նախ Ակն քաղաքի կողմերն, մի մասն անդ հաստատած է իւր բնակատեղին, իսկ միւս մասն, առ ժամանակ մի անդ մնալէ յետոյ, այլ և այլ պարագայից ստիպմամբ թողլով այդ երկիրն, ասկէ 350 տարի առաջ գաղթած է Նիկոմիդիոյ գաւառն և այս կողմերը հաստատած է իւր բնակութիւնն: Այս գաղթականներն առաւելապէս կը բնակին հետեւեալ գիւղերու մէջ. Միջագիւղ (նախկին անունն է Ա. խ կր ա կ կամ Ա. խ կր ա տ) 400 տուն, Քուրգպէլէն՝ 600 տուն, Խնճլար 400 տուն: Անիի այս գաղթական հայոց հետ կ'ապրին և 1000 տուն Հայ-Յոյներ, որ նմանապէս Անեցի կը համարուին և միաժամանակ գաղթած: Այս տեսակ Հայ-Յոյներ աւելի մեծ բազմութեամբ կը գտնուին Ակնի մէջ և նորա շրջակայ գիւղերն: Ըստ աւանդութեան, նոքա 5-6 դար առաջ, երբ Հայաստան տազնապալի վիճակի մէջ էր գտնուէր, և երբ հռովմէական և յունական եկեղե-

ցիները մեծ ճնշումներ կը բանեցնէին հայ ժողովրդեան վրայ, յաջողեցան դաւանակիցներ գտնել: Սոցա թուոյն մէջ էին և Ակնի այդ Հայ-Յոյներն: Նոքա բնականաբար նախ կը հասկանային, թէ կրօնափոխ լինելով դարձեալ հայ են ազգով: Բայց ժամանակի ընթացքի մէջ այս հասկացողութիւնը բոլորովին ուրիշ կերպարանք ստանելով, այժմ այդ 10,000-15,000-է աւելի կրօնափոխ հայերը կատարելապէս կը մերժեն իրենց հայ լինելն, և կ'ըսեն, թէ իրենք յոյն են ազգով և կրօնով, և միայն հանգամանքի բերմամբ, մոռնալով իրենց լեզուն, հայերէն սկսած են խօսել: Մինչև վերջին ժամանակներ յոյն ազգը մեծ ուշադրութիւն չէր ըներ նոցա վրայ, բայց վերջին տարիներն բացուեցան դպրոցներ, ուր յունարէն լեզուով կը դասախօսուին բոլոր առարկաներն, թէև ուսումնարան գնացող աշակերտը մի բառ իսկ չի հասկնար յունարէն: Հետզհետէ յունագէտ երիտասարդներ կ'ելնեն դպրոցէն և ապա կ'ուղարկուին Աթենք՝ ուսանելու: Այդտեղէն կը վերադառնան և՛ իբր յոյն՝ նախանձախնդիր իրենց ազգայնութեան՝ կը ջանան յոյն լեզուն որչափ կարելի է շուտ ծաւալել այդ արդէն կորած հայ հասարակութեան մէջ: Կ. Պօլսոյ Յունական պատրիարքարանը կարող ուսուցիչներ կը զրկէ աստ միշտ: Եւ թերևս մի տասն-տասնհինգ տարի յետոյ այդ բազմաթիւ կրօնափոխ հայերը մոռանան և Հայ լեզուն: Կէյվէի գաւառի հայերն ընթերցանութեան տակաւ ծաւալման պատճառաւ արդէն սկսած են քիչ շատ կորցնել իրենց լեզուի առանձնայատկութիւններն, իսկ «Հայ-Յոյներն» բոլորովին անաղարտ պահած են իրենց նախկին հայերէնն, և ունին այնպիսի բառեր, որ անյայտ են միւս հայ բարբառների մէջ: Այսպէս, օրինակի համար, «բեռ մը քակելէ յետոյ չուանը փաթթելուն» կըսեն՝ մ ն ջ ու կ ե լ, «բեռը վար առնելուն» կըսեն՝ բ թ ե լ, «գամին» կ'ըսեն՝ ո ս կ ա ը, «տան առաջ եղած պարտեզին»՝ ա ծ ու ք և ա յ լ ն և ա յ լ ն: Եթէ պարագաները ներեն, մի երկու գրութիւններ կուղարկեմ սոցա բարբառով: Հայ-Յոյները կը բնակին առաւելապէս ի Միջագիւղ՝ 600 տուն, ի Հուսի 200 տուն և աւելի քան երկու հարիւր տուն ևս ցրուած այս ու այն գիւղի մէջ: Կէյվէի հայոց բարբառն և Հայ-Յունացն, որպէս յիշեցի, համանման են, միայն թէ վերջինս պահպանած է իւր հնութիւնն: Այդ բառբառի գլխաւոր օրէնքն է Ա տառն, իբրև Օ. Հնչել գրեթէ ամեն բառերու մէջ, շատ քիչ բացառութեամբ, օրինակի համար. բան—բ օ ն, ժամ—ժ օ մ, պանիր—պ օ ն ի ը, նա—ո ն, բանել—բ օ ն ե լ և ա յ լ ն: Այսպէս օրինակ, կ'ըսեն «ի՞նչ կ'օնես կ'լլիս, շէտ էս»—ի՞նչպէս կ'ընես, լաւ էս. «դիմն ֆէս կ'օյնէ. էթօմ օխօմը պօնիր առնօմ զօմ»—դու այստեղ կեցիր, երթամ մի հոխա պանիր առնեմ գամ. «հիրեանց տ'էթօնք»—միասին պիտի երթանք. «տի գօմ»—պիտի գամ. «կէթօմ, զոմ փ ը բերօմ»—կերթամ քար կտորելու մուրճը բե-

րեմ, և այլն: Այս Հայոց խօսակցութեան ոճն բաւական նման է Նիրակայ Հայոց ոճին: Կէյվէի գաւառակի մէջ կը գտնուի Սեասա անուն մի գիւղ, որոյ բնակիչները գաղթած են Սեբաստիայէն, սոյն քաղաքի պատմական մեծ աղէտքէն յետոյ:

Վ. Պ. Ն. Պ. Ն.

(Կը շարունակուի):

ԸՆԴԴԻՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՄՈՍԿՈՒՍՅՈՅ

18 Հոկտեմբերի 86 թ.

«Արձագանք» 32 Համարում կարգացի պ. Ա. Քաղէտտեանի նամակը, որով պարոնը ճիգն է թափում՝ ջրել մեր նկատողութիւնը «Ջիլ» և «Նեարգ» բառերի վերաբերմամբ, և իրան պաշտպանելու Համար՝ ապաստան է որոնում երկու, երեւ թէ անառիկ, բերդերում—Հայկազեան և Խուրաբաշեանի բառարանների մէջ: Նա ձգտում է ապացուցանել, որ մենք խօսել ենք այն բանի մասին, որից տեղեկութիւն չունինք: Մեր ասածները եղել են լոկ, առանց Հաստատութեան խօսքեր, իսկ ինքը Հիմնուած է մեր Հաշակաւոր Հայագէտների վերայ:—Ներկայէք, պ. Քաղէտտեան, եթէ մենք մի մարդաբնութիւն անենք. վստահ ենք, որ դուք գիմել էք Հայկազեան բառարանին մեր յօդուածից յետոյ:

Սակայն դիմենք գործի էութեան և մի քանի խօսք ասենք այդ բառերի մասին:

Ժողովրդի բերանում, արդարև, պատվում են «ճիլ» (ջիլ) և օտարազգի «դամար» բառերը: Քողնելով վերջին օտարազգի բառը, մենք կըմտնաստենք մեր խօսքը «Ջիլ» կամ «Ջիլ» բառի մասին: Ամբողջ այդ բառին զանազան նշանակութիւն է տալիս. «Ջիլ» գործ է ամբում և իւր իսկական նշանակութեամբ (ЖИЛА, СУХАЯ ЖИЛА), և նեարգի՝ (НЕРВЪ, нерvus), և երակի (СОСУДЪ): Բայց և ամբօրի այսպիսի գործածութիւնը դեռ չէ կարող թոյլ տալ, պ. Ա. Քաղէտտեան, «Ջիլ» բառը գործ ամել «Նեարգի» փոխարինելու: Երով Հեթեւեւ ներդաշին սիտեման, նեարգերը ջղերից որոշելը բժշկականութեան վերջին ժամանակների արդասիքն է: Եթէ մասնագիտութիւնը սրտում է դոցա, անտարակոյս, մի մասնագիտական գիրք թարգմանողը ևս պիտի աշխատէր զանազանել: Լաւ թարգմանիչը այդ իսկոյն կ'անէր, եթէ իմանար և այն լեզուները, որից թարգմանում և որով թարգմանում է, և՛ այն առարկան, որ նա կամենում է մատչելի անել Հայերին. այն ժամանակ ևս դժուարութիւն չէր լինել, եթէ մի փոքր էլ տեղեկութիւն ունենար Համեմատական լեզուագիտութիւնից:

Որ «Ջիլ» կամ «Ջիլ» խօսքը լիովին Համապատասխանում է ուրախ ЖИЛА բառին,—այդ ըմբռնելու Համար մեծ լեզուագիտական Հմտութիւն պէտք չէ. իսկ որ «Նեարգ» բառն էլ պատկանում է այն բառերին, որոնց արմատը Հնդկա-Եւրոպական լեզուներում ընդհանուր ծագումն ունի (նեարգ=нерvus),—պ. Ա. Քաղէտտեանը կարող է գիմել՝ Հաստատական Հանար՝ լեզուագէտ պ. Լիւբոմանին «Arme-

nische Studien» աշխատութեան և կարգալ Հետեւալ էջերը. 45, 68, 71, 73, 74 և 77:

Ինչ վերաբերում է Հայկազեան և Խուրաբաշեան բառարաններին, մենք նոցա ոչինչ նշանակութիւն չենք տալիս սոյն դիպուածում, նամանաւանդ Խուրաբաշեանի բառարանին, որի թերութիւնները լաւ յայտնի կըլինին նոցա, որոնք կամեցել են լրջօրէն օգուտ քաղել նորանից, ոչ թէ կուրօրէն նորա խօսքերը Հալած իւղի տեղ ընդունել:

Այնու ամենայնիւ պ. Ա. Քաղէտտեանի ականջին մի բան պիտի ասենք. փոխանակ ուրիշների գիտութեան չափը որոշելու, յաւ կանչիք, եթէ առաջուց ուսումնասիրէիք Հայոց լեզուն, որպէս զի մի երկու տող կարողանաք գրել առանց անհարթութիւնների և ճիշտ Հասկանալ Հաշակաւոր Հայագէտների խօսքերը: Հայկազեան բառարանում ասած է. «Նեարգ, նշան. ջղացին թելք և մազմզուկք ի մարմնի կենդանույ՝ ջիլ, նշան. գործի սւժոյ, շարժութեան, քաջ զգայութեան»: Պատշաճ ուշադրութիւն դարձրէք նոյն տառերով տպուած բառերի վերայ:

Առ այժմ այսքանը բաւական ենք Համարում: Հասկացողին մէկ, չ'Հասկացողին Հազար:

Մ. Բարխուդարեանյ:

ՋԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

Եւրոպայի զբոսիչի ութը: «Kreuz. Zeit.» առաջ է բերում Հետեւեալ Հաշիւը Եւրոպական զօրքերի ոչժի մասին, որոնցով դասուորվում են Եւրոպական տէրութիւնները:—Գերմանիայում խաղաղութեան ժամանակ զօրքերի թիւը՝ Հանդերձ սպաներով 445,424 մարդ է, պատերազմի ժամանակ՝ 1,519,000: Աւստրո-Հունգարիայում—խաղաղ ժամանակ՝ 286,422, իսկ պատերազմի ժամանակ՝ 1,077,000: Ռուսաստանում—խաղաղ ժամանակ՝ 807,242 մարդ, պատերազմի ժամանակ՝ 2,000,000: Ֆրանսիայում—խաղաղ ժամանակ՝ 523,824, պատերազմի ժամանակ՝ 1,950,000: Իտալիայում—խաղաղ ժամանակ՝ 215,000, պատերազմի ժամանակ՝ 2,400,000: Ամեն մէկը այս տէրութիւններից, Հարկը պահանջած ժամանակ, կարող է աշխարհազօր կազմել, մօտաւորապէս, մէկ միլիոն Հոգուց բաղկացած:

Նոր Մէջոգիտութիւն: Ներկայումս Փարիզում ապրում է իտալացի Հեղինակ Կամիլին (Վենետիկից), որը խօսում է և գրում 93 լեզուներով և բառբառներով: Այդ պոլիգլոտը (բազմալեզուագէտ) գերազանցում է յայտնի կարգինալ Մէջոգիտիկին, որը գիտէր միայն 58 զանազան բառբառներ:

Ճապոնիայի ուսումնարանները: Ինչպէս յայտնի է, Ճապոնիան աշխատում է մտցնել իւր մէջ Եւրոպայի բոլոր նորաձեւութիւնները: Ուսումնարանական կրթութիւնը ևս մեծ յառաջադիմութիւններ է անում այս երկրում: Ճապոնիայում ուսումնարանական գործի զարգանալու մասին վերջին տաս տարուայ Հաշիւը նկատում է, որ այնտեղ տարրական ուսումնարանների շարքում կան նոյնպէս և մանկական պարտեզներ, չետոյ ուսումնարաններ կոյրերի և Համբերի Համար պանսիօններ օրիորդների Համար: Բայց կանանց ճապո-

նրաչում կրթում են ուրիշ կերպով, քան թէ Եւրոպայում: Ճապոնական օրիորդական ուսումնարաններում առաջին տեղն ընտնում են բարոյական և քաղաքավարութեան կանոնները, ընտանեկան տնտեսութիւն գործադրելու արուեստը, կար և ուրիշ ձեռագործներ: Այդ պանսիօններում դաստիարակչու-հիներն գլխաւոր խնդիրն է՝ պատրաստել ընտանեկն աղնիւ և բարոյական մայրեր: Բացի դրանից Ճապոնիայում դասն-վում են և բժշկական ուսումնարաններ, ճարտարապետներ, իրաւաբաններ, երկրագործներ, երկրաչափներ և լեզուա-գէտներն ուսումնարաններ: Վերջինները բոլոր դասընթացը անցնում են զերմաներէն լեզուով, և բացի դրանից՝ սովո-րում են չինարէն, կորէական, անգլիերէն, Ֆրանսերէն և վերջապէս ուսուցիչն լեզուները: Ճապոնիայում կայ և մարմ-նամարզարան: Սակայն Ճապոնիայում առանձին ուշադրու-թիւն են դարձնում, այդպէս անուանուած, օրինակելի ու-սումնարանների վերայ:

Թմբակեր-Հրատարակիչ Ա.Բ.Գ.Ա.Ր ՅՈՎ. ՀԱՆՆԻՍԻԱՆԻ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲՃԵԿԱՊԵՏ ԳՐԻԳՈՐ ՏԷՐ-ՄԿՐՏՁԵԱՆ ՏԷՐ-ԳՐԻ-ԳՈՐԵԱՆՑ ընդունում է Հիւանդներին ներքին և վի-րաբուժական Հիւանդութիւններով: Առաւօտեան 10—12 ժամ. երեկոյեան 4—6 ժ.: Կաթօլիկաց փողոց, տուն Սահաթսագեանի № 3.

Նոյն տեղ.

Մանկաբարձուհի և ծաղկահատուհի Տիկին Կլո-տիլդայ Կրօլէրօ Տէր-Գրիգորեանց:

Կեդրոնական զրավաճառանոցում զտնվում են պ. Նշան Պէրպէրեանի Հետեւեալ Հրատարակութիւնները, ԱՐԺԱՆԱ-ՅՐԱԾ գներով.

- 1. Սերանոյզ՝ գրեց Ս. Տիւսաբ, գինն է 1 50
Առաջ վաճառվում էր 2 ռ. 25 կ.
- 2. Սել՝ Քափառական Հրէա, 4 Հատոր, պատկերազարդ 9 —
Առաջ վաճառվում էր 12 ռ.
- 3. Ճաշակ արդի Հայ մատենագ., Պիպէռճեանի, ք. տիպ— 40
- 4. Հիւգօ՝ Թշուառներ, երեք Հատոր, նորագոյն տիպ . 3 —
- 5. Գիւցազուհի աշխատութ. (труженики науки) պատկ. 1 50
- 6. Փոքրիկ աղի մը Յուշալէպը — 75
- 7. Մեր երկրաւոր բնակարանը և իւր Յօրինիչը — 50
- 8. Համառօտ Մարմնամարդութիւն — 75

Արտաքին քաղաքներից ապսպրողները ճանապարհա-ծախք պիտի վճարեն:

ՆՈՅՆ ՏԵՂԸ.

Տաղաւարեան՝ Բնական պատմութիւն. Հատոր Ա. Կենդանային Հիւսուածաբանութիւն և մարդկային կազ-մախօսութիւն և Բնախօսութիւն: Ի ՊԵՏՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՐՈՐԳԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԱՑ: Ընտիր և ճօխ տպագրու-թիւն, բազմաթիւ նրբագիր պատկերներով զարդարած: Գիրքը բաղկացած է 24 քառտմալ թերթերից, տիպը մաքուր է, թուղթը ընտիր: Գինն է 4 ռ.: Արտաքին քաղաքներից ապսպրողները ճանապարհածախք պէտք է վճարեն մօտաւորապէս 40 կ.

ԿԵՂԵՐՈՆԱԿԱՆ ԳՐՈՎԱՃԱՌԱՆՈՅՈՒՄ
Ստացուել են հետեւեալ Հայերէն նոր Հրատարակու-թիւնները

Ընթերցանութեան գրքեր Բ. Կ.

- 1. Արփիարեան՝ Նորավէպք—գատապարտեալը, երա-զի մը գինը, կատակ մը. — 50
- 2. Ապուշը — 40
- 3. Կոտանեանց՝ Հայոց վանքերը (Համառ. տէսու թ.)— 50
- 4. Տէր-Աղէքոյանդրեան՝ Թիֆլիսեցոյ մտաւոր կեանքը 1 50
- 5. Փառնակէս՝ Գրականական երեկոյ կատակերգութ.— 20
- 6. Շուշանիկ Շամբրեան, Լուսանման, Հին զրոյց . — 40
- 7. Արեւոյի մահը (դիկէնտից). — 5
- 8. Աւենարեօս՝ Փրիտեօֆ դիւցազն, նորմանդական Հին զրոյց — 30
- 9. Գրեգոր Լուսաւորեչը և իւր սրգեքը — 15
- 10. Հայ դիւցազնու հե մը — 25
- 11. Հայ գիւղացի — 10
- 12. Պերպէրեան՝ գրամ, տնտեսագիտ. բանախօսութիւն— 35

Դասագրքեր

- 1. Ն. Սիմոնեանց՝ Ընդհանուր աշխարհագրութիւն, երկրորդ տարի, երկրորդ տիպ,
- 2. " Մասն ուսումնական և բնական, պատկերներով և քարտեզով — 60
" Ընդհանուր աշխարհագրութիւն, երրորդ տարի, մասն քաղաքական, երկ. տիպ— 60
- 3. Տէր Ղևոնգեան՝ Մայրենի լեզու, ա. տարի, տասնե-մէկերորդ տիպ, բարեփոխած, ճօխացրած և պատ-կերազարդ — 35
- 4. " Մայրենի լեզու, երկրորդ տարի, ութերորդ տիպ, բարեփոխած և ճօխացրած նո-րանոր լօղուածներով — 40
- 5. " Մայրենի լեզու, երրորդ տ. հինգ. տ. — 45
- 6. Ս. Մանդինեան՝ Ընտանեկան աշխարհ, Ժողովրդա-կան բանաստեղծութեան Հաստուածներով և Այգը-բեհար. երկրորդ տիպ — 25
- 7. Տէր-Ստեփանեանց՝ Սկզբունք Քրիստոնէական Հա-ւատոյ Հայաստանեաց եկեղեցւոյ, չորրորդ բա-րեփոխեալ տպագրութիւն — 50

Դասագրքերից գումարով գնողները 20% զեղչ ունին: Ընթերցանութեան գրքերի Համար ճանապարհածախք պէտք է ուղարկել մանեթին 15 կոպ.

ԼՈՅՍ ՏԵՍՍԻ

Փ. ՎԱՐԳԱՆԵԱՆԻ ԹԱՐԳԱՆՈՒԹԵԱՄԲ

ՖԵՐԳԻՆԱՆԻ ԸՄԻՏԹԻ

- ՀՈՄԵՐԻ ԻԼԻԱԿԱՆԸ, արձակ պատմուած, պատկե-րազարդ, 1886. գինն է 1 ռ.
- ՀՈՄԵՐԻ ՈՒԻՍԱԿԱՆԸ, արձակ պատմուած, պատկե-րազարդ, 1886. » 1 20
- ԲԵՆԵԱՄԻՆ ՅՐԱՆԿԻՆ, երկրորդ տիպ, 1885. . . — 40
- ԴԵՆՈՐԳ ՈՒՍՇԻՆԳՐՈՆ, երկրորդ տիպ, 1885. . . — 60

Ծախվում են՝ «Կենդրոնական զրավաճառանոցում» և Հրատարակչի մօտ՝ Тифлисъ, Сололаки, Нагорная ул. № 24. Филиппу Артемьевичу Варганьяну.

ԷՄԻՆ ՏԷՐ-ԳՐԻԴՈՐԵԱՆՅ

ՉՐԿԱՆՔԻ ԶՈՂ

ԳՐԱՄԱ 4 ԳՈՐԾՈՂՈՒԹ.

Վաճառում են 80 կողպեղով Տփլիսի գրավաճառանոցները և Երևանում Հեղինակը:

(10-4)

Unter dem Titel

ARMENISCE BIBLIOTHEK
(Herausgeber: ABGAR IOANNESSIANY)

führe ich dem deutschen Lesepublikum eine Serie der besten, ausgewählten Werke einer in Europa noch wenig bekannten, und doch viele Schätze bergenden Litteratur der Gegenwart in vorzüglichen Uebersetzungen und ge- diegener handlicher Ausstattung vor.

Als erster und zweiter Band wurden soeben ausgegeben

I DREI ERZÄHLUNGEN

von
RAPHAEL PATKANIAN
Aus dem Armenischen uebertragen
von
ARTHUR LEIST
Ein Band 8°, 13 Bogen.—Preis 75 kop.

II LITTERARISCHE SKIZZEN

von
ARTHUR LEIST.

Inhalt: Ein Volkssänger. Raphael Patkanian. Pater Leo Alischan. Mkrtitsch Beschiktaschlian. Abowian. Die Kongregation der Mechitaristen. Erzbischof Gabriel Aiwasowski. Gabriel Sundukiantz. Das armenische Zeitungswesen. Ein Vater seines Volkes.

Ein Band 8° 12 Bogen.—Preis 75 kop.

Für den Kaukasus ausschliesslich zu haben in der
Центральная Книжная Торговля въ Тифлисъ.

WILH. FRIEDRICH
K. R. Hofbuchhändler

ԳԵՆԵՐԱԼ-ԼԷՅՏՆԵՐԱՆՏ ԻՇԽԱՆ ԻՎԱՆ ԿՈՆՍՏԱՆՏԻՆՈՎԻԶ ԲԱԳՐԱՏԻՕՆ-ՄՈՒԽՐԱՆՍԿԻ Լ և նորա որդի ԳՆԴԱՊԵՏ ԻՇԽԱՆ ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ԻՎԱՆԻԶ ԲԱԳՐԱՏԻՕՆ-ՄՈՒԽՐԱՆՍԿԻ յայտնելով, առաջինը իւր ամուսնոյ և երկրորդը իւր մօր ՎՍԵՄՈՓԱՅԼ ԻՇԽԱՆՈՒՀԻ ՆԻՆԱ ԼՆԻԱՆՈՎՆԱ ԲԱԳՐԱՏԻՕՆ-ՄՈՒԽՐԱՆՍԿՈՒ մահուան մասին, խնդրում են ազգականներին և ծանօթներին՝ շնորհ բերել յուղարկաւորութեան հանգիստին, որ տեղի կունենայ այսօր, նոյեմբերի 2-ին, առաւօտեան 10 ժամին, Մցխեթայի մայր եկեղեցում: Երկաթուղու արտաքոյ կարգի զնացքը դուրս կը գայ Թիֆլիսից դէպի Մցխեթ առաւօտեան 9 ժամին 10 րոպէին, իսկ կը վերադառնայ Մցխեթայից ժամը 4-ին և 30 րոպէին:

1—1

Ս Ր Ք Ա Յ Լ Ի Ի Ր

Գրամայ 5 գործող. Հեղ. Վ. Շէքոյովիի, Թարգ. Ս. Արծրունու:

«ԱՐՔԱՅ ԼԻՐԻ» գերը կը կատարէ Պ. ԱՂԱՄԵԱՆԸ

Գ Ո Ր Ծ Ո Ղ և ն զ Ի ն ք

Լէլ. Բեկտանկայի Թարգաւոր . . . Պ. Արծրունու	Պալարէ . . . Պ. Տրտակ
Գուգար Բողունկայի . . . Պ. Արծրունու	Կուտան, պալատական . . . Պ. Տրտակ
Գուգար Կրտսի աղբի . . . Պ. Վրտյոյ	Թարգաւոր Լիբի ճաղրածուն . . . Պ. Տէլ-Գաւաթեան
Գուգար Ալեանկայի . . . Պ. Արծրունու	Մէ ակնուպական . . . Պ. Կարինեան
Կրտստեղ կուն . . . Պ. Զմշկեան	Մուսայ . . . Պ. Կարինեան
Կէտ կուն . . . Պ. Աւուրեան	Կոնկրկիւ . . . Ս. Սարթ. Զմեկեան
Կազար կուն, Կլոպտանցի որդին. Պ. Արծրունու	Ռէգանա . . . Ս. Վարդուհի
Էրզնէ, ապրիլի որդի Կրտստի. Պ. Խուսեան	Կրտսի կա . . . Ս. Զամիկ

Թարգաւորը հետեւեալ, ապետներ, որոշանդաներ և զինուորներ:
Տնարանն է Բեկտանկան կգրու մէջ: Այս ներկայացմանը կը մասնակցեն 50 հոգի:
ՍԿՐԶԻՆ Է 8 ժԱՄԻՆ

Дозв. Ценз. Тифлисъ, 1 Ноября 1886 г.
Типографія И. Мартиросіанца, на Орб. ул., д. № 1/2